№ 3 ՄԱՐՏ 1884

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 3

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Հսկայ-Մըջիւն . . . . . Ալեհանբիւս
Թարգ . . . . . Տ. Դիւլզատեան
Մեր Դուրսու�ը (Մանկական յիշողութիւնից) Ղ. Աղայեանց
Աղբիւր (Ոտանաւոր) . . . . . Ս. Տ-Մելքիսեդեկ
Պարոյր Հայկազն (Շարունակութիւն) . . . Բաֆֆի

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Մեր բաբեբաբները II Ս. Մեսրոպ և Հայոց տառերի գիւտը . . . . . Կ. Մ. Շահնազ
Էլեքտրականութիւն II . . . . . Ն. Ա.

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Խրօմոգրաֆ

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Երախտագիտութիւն (Թարգ. Քրանս). . . Փ. Վ.-

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հանելուկները (4 հատ)
Սամիա խնդիրը
Շուտասելուկ
Նախընթաց № 2-ի մէջ եղած հանելուկների և բերուածների ցատրութիւնները։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ.

Մանուկները և նրանց ընթերցանութիւնը։
Համառօտ հայեացք բնագիտութեան դասատուութեան և ուսումնական գրօսանքների վրայ . . . . . Դ. Խաչամիրեանց
Կամքի ոյժը (Առ. Բահաթրեանց) –
Մեր առաջարկութիւնները. – Բնագիտական գրքեր։
Մանկական օրինակելի գրադարան.
Խառն լուրեր։
Մի կարճ նկատողութիւն.
«Աղբիւրի» նուիրողները։

ՊԱՏԱՅԽԱՆՆԵՐ։ ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺՆԻՄԷՋ ՄՏԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

					Վրիպակ	Ուղիղ
Երես	104	տող	12	վերևից	պիտուորական	գինուորա
»	111	»	5	—	չմաց	չմնաց
»	122	»	30	—	գատում	գանում
»	128	»	13	—	Համեմատ	Համամի

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՔԵՂԱՆԵՐԻ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 3

ՄԱՐՏ

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, 5
1884.

ՀՍԿԱՅ-ՄՐՋԻՒՆ

(ԱԻԵՆԱՐԻՈՒՍԻ)

ՀՈՒՆՁ

I

Նձի ժամանակն էր։ Մրջնանոցի մօտի արտում աշխատում էին հազարաւոր մրջիւններ։ Դրանցից շատերը բրնձի հասկերի վրայ նստած մանգաղի նման սուր ծնօտիկներով կտրում էին հասած հատիկների կոթերն ու վայր ձգում։ Ցաքրում սպասում էին միւսները, որոնք վերցնում մաքրում էին վայր ձգած հատիկներն ու տանում նշանակած տեղը։

Արտում զանազան ուղղութիւնով գցած էին բազմաթիւ ճանապարհներ, որոնք ճառագայթների նման հաւաքվում էին մրջնանոցի գլխաւոր մուտքի մօտ։ Այդ ճանապարհների կողքերին իրարից որոշ հեռաւորութիւնով

դարսուած էին բրնձի կիտուկներ. դրանք մրջիւնների ժամանակաւոր շտեմարաններն էին։ Այդտեղ կանգնած էին ուրիշ մշակներ — բեռնակիրներ, որոնց պարտաւորութիւնն էր բրինձը տանել մինչև մօտակայ կիտուկը, ուր իրանց բեռը տալիս էին այնտեղի բեռնակիրներին, որոնք պէտք է տանէին մինչև երրորդ կիտուկը և այլն. մինչև կը հասցնէին մրջնանոցը։ Մրջնանոցում նրանց սպասում էին շտեմարանների վերակացուները, որոնք առնում էին բրինձն ու դարսոտում նշանակած տեղերում։

Այդ բոլոր աշխատանքները կատարում էին մի տեսակ սև մոխրագոյն փոքրիկ մրջիւնները։ Բայց պէտք է ասել, որ մրջմնանոցը դրանց չէր պատկանում։ Նրա տերերը այն շէկ մեծ-մեծ մրջիւններն էին, որոնք իրանց բնակարանի մօտ արևի տակ պառկած նազում էին իրար հետ։ Այդ տեղից շատ յարմար էր նրանց համար աչքի ածել ամբողջ դաշտը և նայել սևամորթ մշակների աշխատելուն։

Պառկածների մէջ մէկն աչքի էր ընկնում իր մեծութիւնով և մեծ մարմնով։ Նա, ինչպէս երևում էր՝ հարգանք և պատիւ էր վայելում միւսներից, որովհետև հանդստանում էր հոտաւէտ կարպետի — վարդի թերթի վրայ։ Նա իրան շրջապատող մրջիւնների մայրը — թագուհին էր։

Մայր մրջիւնն այսօր շատ յոգնած էր երևում. ճշմարիտ ինչպէս չյոգնել։ Առաւօտուանից մինչև ճաշ նա ձու էր դնում։ Եւ ինչ էք կարծում, սիրելի ընթերցող, նա խոմ հաւի պէս մի կամ շատ-շատ երկու ձու չէր դրել այսօր, այլ ուղիղ 10,000 հատ։ Խեղճը բոլորովին ուժից ընկած, կիսաուշաթափ դուրս եկաւ մրջնանոցից մի քիչ հանգստանալու ու մաքուր օդ ծծելու։ Նա իր պարտքը կատարեց. մնացած բոլոր չարչարանքները դարձեալ այն սև փոքրիկ մրջիւնները պէտք է կրէին։ Նա բոլորովին անհոգ էր. փառք Աստուծոյ, մտածում էր նա, մի ամբողջ

խումբ խնամատարներ կան. նրանք ձուաներից ճիճու կը հանեն, որոնց կը կերակրեն, կը պահպանեն. երբ որ ճիճուները մեծանան՝ կը մտնեն իրանց հիւսած պատեանի մէջ. մի քանի ժամանակից յետոյ խնամատարները կը ճըղեն այդ պատեանը և նրա մէջից դուրս կը բերեն փոքրիկ մրջիւնը:

Արեգակի տաքութիւնը թուլացրեց նրա յոգնած անդամները, և նա ննջեց: Երբ զարթնեց, իր չաղլիկ ոտերը մեկնելով մի կուշտ յօրանջեց ու յետոյ արեգակի լուսից աչքերը ճսճպացնելով քնաթաթախ դեմքով նայեց դէպի դաշտը:

«Այն ով է կրկին յօրանջելով ու բեխով հեռուն ցոյց տալով հարցրեց նա,—մեր շէկերիցն է երևում»:

Նա չէր սխալվում. ուր որ ցոյց էր տալիս, սևամորթ մշակների մէջ աչքի էր ընկնում ազնուացեղ շէկ մրջիւնը, որը հեռուից զանազանվում էր իրան շրջապատողներից իր մեծ հասակով և իր կաշուի փայլուն պղնձի գոյնով: Նա վեր ելած հասկի գլուխը, մեծ զուարճութիւնով կտրատում էր հատիկների կոթերը: Իր հասակի մեծութեան և ահագին ուժի շնորհիւ նա երեք-չորս անդամ աւելի շուտ-շուտ էր աշխատում, քան թէ փոքրիկ մշակները: Երկու ոտներով պինդ բռնում էր հասկը, մօտենում էր այս կամ այն հասած հատիկին ու սկսում էր ոլորել նրա կոթը; յետոյ յանկարծ թափ էր տալիս ու պոկում. հէնց կանգնած տեղումն էլ մաքրում էր ու ցած գցում միայն ոսկած հատիկները: Նրա մօտի կանգնած մշակները դժուարութիւնով էին կարողանում կրել նրա թափած բրինձը:

—Կրծանն է, Կրծանը, մայր—մրջիւնին պատասխանեց հանսգտացողներից մէկը:

—Ինչպէս երևում է ատամները քոր են գալիս. էնդուր էլ Կրծան անուն են կպցրել էֆ: Դեռ ձուից նոր էր դուրս ե-

կած՝ իր խնամատարի ձեռները կրծոտեց։ Ես ինքս էլ չգիտեմ պատճառը, երևի խնամանատարի առողջ ձեռները նրան դուր չէին գալիս, ծիծաղելով ասաց մայր-մրջիւնը։ Կանչեցէք մի տեսնենք, կանչեցէք։

«Կրծան, ա՛յ Կրծան», գոռացին շէկերը։

Կրծանը յետ նայեց ու երբ տեսաւ որ մայրն է կանչողը, լուռ վէրեկաւ բրնձենուց և դիմեց դէպի շէկերը։

—Ա՛յ երես առած, այնտեղ ինչ էիր շինում։

—Աշխատում էի, մայրիկ, ճակատը սրբելով պատասխանեց Կրծանը։

—Աշխատո՞ւմ էիր, քմծիծաղով հարցրեց մայրը։ Դու այն տեղ բրնձի յետ խաղ էիր անում, չէ թէ աշխատում։ Աշխատել նշանակում է ամբողջ տարին զգուշութիւնով նայել, որ ջոկած սերմացուն խոնաւութիւն չառնի և դրա համար հարկաւոր է շուտ-շուտ ակրտալ, շուռ տալ, տաք եղանակին դուրս տանել փռել արեգակի տակ։ Աշխատել նշանակում է արտը մաքրել, անցեալ տարուանից մնացած արմատները պոկել, քարերը հաւաքել, վարել, հողը փափկացնել, ցանել, ջրել, քաղհանել... վերջապէս ճանապարհները մաքուր պահել։ Ահա, թէ ինչ է նշանակում աշխատել, և ոչ թէ երթալ քեզ պէս հատիկով գնդակ խաղալ։

—Մայրիկ, ես պատրաստ եմ այդ բոլորն էլ կատարելու, եթէ հարկաւոր է։

—Հարկաւոր լինելով հարկաւոր է, բայց դու, զաւակս, քեզ լաւ ճանաչիր. մեր մրջիւնների առածն ասում է հանդարտ նստիր որ ծանր քաշես։ Ախար մի լաւ մտածիր է. բա էլ ինչու համար են դերիները, երբ դու պէտք դնան այդպիսի անարժան գործով զբաղուես։ Դու մի մոռանար, որ շէկերի ազնիւ ցեղից ես—բուն հողագործ ես։

—Իմ կարծիքով, մայրիկ, ինչպէս դու ասացիր, ես՝ իբրև իսկական հողագործ՝ պէտք է օրինակ տամ մշակներին, որոնց սիրտն այնքան չի ցաւիլ իմ ապրանքիս համար, ինչքան իմս։

Միւս շէկ մրջիւնները սկսեցին ծիծաղել այդ խօսքերի վրայ։

Մայր-մրջիւնը պառկած տեղից թիկն տալով կռան վրայ.

—Ի՞նչ խելօք տղայ է, ասաց նա. յանկարծ աղատ կալուածատէր մրջիւնը գնա օրինակ տայ իր ճորտերին —գերի նեգրներին։

—Բայց, մայրիկ, չէ՞ որ մարդերի մէջ նեգրներն արդէն աղատ են, անհամարձակ ձայնով ասաց Կրծանը։

—Տե՛ս թէ ում հետ է համեմատում մեզ։ Իմացիր, որ եթէ մարդիկ խելօք լինէին, այդպիսի վնասակար, ուրեմն և յիմար բան չէին անիլ։ Դու ի հարկէ չգիտես, որ երբ մարդկային ցեղը թափառում էր խիտ անտառներում, կերակրվում էր դանդաղ պտուղներով և արմատներով, մրջիւններն արդէն շատ առաջ էին գնացած։ Մեր նախնիքը —շէկ մրջիւնները արդէն ունէին կանոնաւոր մրջնանոցներ, պարապում էին հողագործութիւնով։ Իսկ կարմիր մրջիւնները —անասնապահները բաւականին կատարելագործած էին կաթնեղործութիւնը։ Բացի մրջիւնների այդ երկու ազնիւ ցեղը, արեգակը լոյս աշխարհ բերեց և մանր մրջիւններին՝ որոնք մեզանից և կարմիր մրջիւններից անհամեմատ ցածր են՝ ու ներկեց նրանց սև—գերիի գոյնով։ Այդ սև մրջիւնները մեզ համար մի պարգև էին. և մենք ի՞նչպէս չընդունէինք այդպիսի երկնային ընծան։

—Բայց մի տեսակ սիրտս տանջվում է, ասաց Կրծանը, երբ տեսնում եմ այդ խեղճերին իրանց ուժից վեր աշխա-

տելիս։ Նրանք իրանց այդ փոքր տեղովն ստիպուած են աշխատել համ մեզ, համ էլ իրանց համար։ Իսկ մենք, որ անհամեմատ ուժով ենք, ձեռքներս ծալած հանգիստ նստած ենք։ Ձեմ հասկանում թէ՝ բա էլ ինչո՞ւ համար է մեր ոյժը։

—Ինչպէս թէ ինչո՞ւ համար։ Բա ինչո՞վ ենք ձեռք բերել հէնց այդ գերիներին, եթէ ուժով չէ։ Եթէ ես այսօր զբաղուած չլինէի մանկանոցում՝ ինքս կ'առաջնորդէի ձեզ և ցոյց կը տայի թէ ինչո՞ւ համար է մեր ոյժը։ Դուք, սիրելի շէկեր, գլխաւորապէս զինուորներ էք։ Այդ չմոռանաք։ Ձեր կեանքի նշանաբանը պէտք է լինի քաջութիւնն ու զիւորական փառքը։ Դու ինքդ, զաւակս, քանի անգամ ցոյց ես տուել քո քաջութիւնն ու աներկիւղութիւնը։ Իսկ քաջագործութիւններից յետոյ հանգստանալը մեղք չէ։

Կրծանը լուռ լսում էր, բայց չէր կարողանում ըմբռնել մօր ասածները։ Նա չէր կարողանում հասկանալ, թէ ինչու այն փոքրիկ մշակները՝ որոնք նոյնպէս մրջիւններ են, նոյնպէս խելք ու հակացողութիւն ունին՝ պէտք է ծառայեն ուրիշներին։ Բայց ինչն է ստիպում դրանց ստրուկ մնալ, կամ ով է դրանց գերի դարձրել։ Խեղճ Կրծանն ինչքան էլ գլխին զուտուեց՝ չկարողացաւ պատասխանել այդ հարցերին։

(Կը շարունակուի։)

ՄԵՐ ԴՈՒՐՍՈՒՆԸ

(Մանկական յիշողութիւնից։)

I

Մենք գոմէշներ շատ ունէինք մինը քանըզ միւսը գեղեցիկ և վայելչակազմ, բայց ամենին գերազանցում էր Դուրսունը՝ ոչ միայն իւր գեղեցկութիւնովը, այլև իւր ուժովը, իւր խելքովն ու ճարպիկութիւնովը։

Բնաւորութեան կողմանէ մարդկանց պէս անասուններն էլ են տարբերվում միմեանցից։ Նրանցում էլ մէկն աւելի աշխոյժ է լինում, միւսը դանդաղ, մէկը սրտոտ, միւսը վախկոտ, մէկը բթամիտ՝ միւսը սրամիտ։ Մեր Դուրսունը գոմէշների բոլոր լաւ յատկութիւններն ունէր։

Դուրսունը գեղեցիկ էր իբրև գոմէշ, և շատ գեղեցիկ։ Նրա հայեացքի մէջ ամեն ինչ արտայայտվում էր, երբեմն ուրախութիւն և հաճոյք, երբեմն զարմացք և տխրութիւն; երբեմն զայրոյթ և բարկութիւն, երբեմն խելք և ուշիմութիւն։ Երբ որ նա կանգնում էր իբրև մի առիւծ, պոչը շպրտում գցում մէջքի վերայ, վիզը թեքում և նայում երեսիս, ես մնում էի հիացած, թէև անգիտակցաբար։

Նա ամեն բան հասկանում էր; ամեն ասուած լաւ ըմբռնում էր. կանչում էիր պատասխան էր տալիս. ափսոս միայն, որ իւր միտքն ու զգացմունքը յայտնելու համար միայն չորս ու հինգ բառաձայն ունէր, այն էլ այնպէս դժուար արտասանելի, որ մեր տառերով չեն գրվում։

—Դուրսուն, հասկանում ես, ինչ եմ ասում, — հարցնում էի շատ անգամ։

—Վուլի՞—պատասխանում էր Դուրսունս և պռշկում։ Ի՞նչքան քաղցր էր նրա պռշկալը։

—Դուրսուն, արի՛ այստեղ։

Դուրսունը հասկանում էր միտքս։ Գալիս էր մօտս, ցածրացնում էր գլուխը, ես երկու ոտքով կանգնում էի վերան և նա բարձրացնում էր դնում մէջքին։

Բայց ինչո՞ւ Դուրսուն էր անունը, գուցէ կը հարցնէք, որ մի գեղեցկահնչուն անուն չէ և ոչ իսկ Հայերէն։ Ես այդ բառը կը բացատրեմ ձեզ, եթէ չէք ձանձրանալ։

Մեզանում վաղուց սովորութիւն է դառել կենդանիներին թուրքերէն անուն դնելը, շատ սակաւ դնում են և Հայերէն անուններ։ Բայց թէ թուրքերէնը և թէ Հայերէնը ըստ մեծի մասին կենդանու արտաքին յատկութիւնից են վերցնում։ Աննշան սև գոմշին ասում են Զարա (սևուկ), եթէ ճակատը դաշայ է, սպիտակ նշան ունի, ասում են Թափալ (դաշդա, նշանաւոր), եթէ կրծքին կամ վզին շէկ կամար ունի, Հէքեալ և այլն։ Գոմշակովերին ջոկ անուն են տալիս ու այն աւելի քնքոյշ, ինչպէս Մարջան (բուստ) Թելլի (Հունաւոր), Զէկիկ, Թուխծամ և այլն։ Եզներին ու կովերին էլ ուրիշ-ուրիշ անուններ են տալիս։ Այս անունների ընդհանուր կանոնից դուրս է Դուրսուն անունը, թէև բացառութիւն չէ։ Դուրսունը թուրքերէնի մէջ նոյն է, ինչ որ մեզանում մնացական բառը։ Մնացական են անուանում այն երեխաներին, որոնք իրենց ծնողաց միակն են լինում, որոնցից առաջ ծնուածները ապրած չեն լինում։ Այս տեսակ պատճառից է յառաջ եկել և մեր Դուրսուն-մնացականի անունը։

II

Դուրսունը իբրև բեռնակիր։ Ամեն անգամ սար գնալիս և այնտեղից դառնալիս իմ ձին Դուրսունն էր։ Մեծ թաղիքը (ալաչուխի քեչան) ծալում գցում էինք

վերան, երկու ջուալ էլ աման-ամանով լցնում, բարձում, ես էլ մէջին նստում էի և ճանապարհ էինք ընկնում դէպի սար։ Նա ինձանից լաւ էր իմանում ճանապարհը և լաւ էլ հասկանում էր, թէ ուր են ուղարկում։ Շատ դոմէշներ առուների ու ցեխոտ լճակների մօտով անցնելիս, արևի շոգից և ճանճ բռից նեղանալով՝ ընկնում էին ցեօ-լերի մէջ և ցեխի մէջ թաւալուելով բեռներն ապականում էին և մէջի ամանները կոտրատում։ Դուրսունս նրանց օ-րինակին չէր հետևում։ Նայում էր նրանց և գլուխը շար-ժում, որով պախարակում էր նրանց արարմունքը։ Անտառ մտած ժամանակն էլ՝ շատ դոմէշներ ծառերին էին քսում, ցածրացած ճղների տակովն էին անցնում, որ իրենց բեռ-ներից ազատուին, բայց Դարսունը այդպէս բան չէր անում, թէև խոլամանկութեան գալով՝ նա կարող էր ամենին դաս տալ։ Երևի նրանք մի սխ ունէին իրենց տէրերի դէմ, բայց մեր Դուրսունը այդպիսի պատճառ չունէր, քանի որ նա մեր ամենխս սիրելին էր և ամենքիս փայփայուած։ Հայրս նրան ճանապարհ ձգելով՝ ասում էր. «Տէս, Դուր-սուն, քեզ եմ պահ տալիս այս բեռն էլ, այս երեխէն էլ, պիտի անվտանգ տեղ հասցնես»։—Վուլի՜, պատասխանում էր Դուրսունը և իւր խոստումը կատարում ամենայն հաւատարմութիւնով։ Նա գլուխը քաշ գցած բոլոր ձիա-ւորների առջևն էր գնում, այնքան արագաքայլ էր. թէև մասամբ էլ նրանից էր այդ, որ ինքը մեզանից շատ էր ցանկանում ժամ առաջ հով ու զով տարերն ընկնել ու ազատուել ճանճ ու մժեղից։

III

Դ ո ւ ր ս ո ւ ն ը ի բ ր և պ ա հ ա պ ա ն։ Դոմէշները առհասարակ գայլերից երկիւղ չունին։ Գայլերը գիտեն, որ դոմէշներն իրենց ժանիքի բանը չեն, և այդ պատճա-

ռով նրանց մօտենալ չեն յանդգնում։ Այդ բանը գիտեն և տաւարները, այդ պատճառով գոմէշների մօտ իրենց միշտ ապահով են զգում։ Դուրսունը իբրև պահապան և պաշտպան տաւարների՝ շատ գոմէշների գերազանցում էր իւր ասպետական քաջագործութիւնովը։ Գայլերի յարձակմունքներից նա ոչ միայն այն ժամանակն էր պաշտպանում տաւարներին, երբ որ նրանց մօտն էր լինում, այլ հեռու եղած ժամանակն էլ, երբ որ ականջն էր հասնում յայտնի վտանգաւոր գոռոցը, նա մի ակնթարթի մէջ կատաղի վագրի պէս վազում էր և օգնութիւն հասցնում սարսափած նախիրին։ Նա շատ անգամ յարձակվում էր սովից յանդգնացած գայլերի վերայ ու նրանց եղջերահար և ոտնահար անում։ Նրա օրինակին էին հետևում և միւս գոմէշները և այսպէսով յաղթութիւնը միշտ իրենց կողմն էր մնում։ Այսպիսի յաղթութիւններից յետոյ տաւարները միշտ մօտենում էին Դուրսունին և հոտոտում նրանից, դրանով նրանք յայտնում էին իրենց շնորհակալութիւնը։

IV

Դ ո ւ ր ս ո ւ ն ը ի բ ր և ը մ բ ի շ։ Գոմէշների մենամարտութիւնը մի զարհուրելի տեսարան է։ Մենամարտութեան ժամանակ մեր Դուրսունը իւր խելքը կորցնում էր ոչ խելքով, ոչ ծեծով ուշքի չէր բերվում, այլ աւելի ևս տաքանում էր և դառնում մի կատաղի գազան։ Իւր ծանօթ գոմէշներից ոչ մէկը նրա հետ չէր մենամարտում, փորձով գիտէին, թէ ինչ գազանի հետ գործ ունին, բայց եթէ հանդիպումէր նրան մի անծանօթ և իւր ուժի վերայ մեծ համարում ունեցող անբարտաւան գոմէշ, նրան խրատում էր Դուրսունը և շատ անգամ ճանապարհ ձգում ուղղակի դէպի միւս կեանքը։

Մէկ անգամ մի օտար անծանօթ գոմէշ հեռուից նկատելով Դուրսունին՝ իւր քայլերն ուղղեց դէպի նա, բայց այնպիսի մի ձևով՝ որ կարծես գետինը պիտի դողդողայ իւր ոտների տակ։ Այդ ձևը շատ յարմար էր դալիս նրա հսկայամարմին հասակին։ Նրա եղջուրները երկարումէկ ձգուել էին վզի ուղղութիւնով և հասել մինչև էրաթաթերը։ Ամբողջ ճակատը բաց և դուրս պրծած էր ինչպէս մի ահագին թումբ։ Սրա հակառակ Դուրսունի եղջիւրները դէպի առաջ էին թեքուած և կեռացած, որ հարկաւոր դէպքում վահանաձև գլխի երկու կողմից նիզակների պաշտօն կատարեն։

Անծանօթ գոմէշը քիչ-քիչ մօտենալով կանգ առաւ, վիզն սկսեց ծաղրական ձևով ծրմռել, գլուխը թեքեց դէպի վեր և բարձրից մի արհամարհական հայեացք ձգեց Դուրսունի վերայ։ Դուրսունը անշարժ նայում էր անծանօթի վերայ, բայց այնպէս, որ կարծես ասում լինէր իւր մէջ. — Այս յիմարն ինչ է ուզում ինձանից։ Անծանօթը շարունակելով իւր ծամածռութիւնները, սկսեց մօտենալ։ —Վղղղ — ասաց Դուրսունը, իբր՝ հասկացայ քո միտքը, համեցէք, ես պատրաստ եմ, և իւր գլուխն սկսեց աւելի ևս բարձրացնել և խեթ-խեթ նայելով դիմաւորեց անծանօթին կողմնակի ճանապարհով։ Գոմէշներն սկսեցին իրար նայելով մի ձուաձև պտոյտ անել և շրջանը քիչ-քիչ փոքրացնելով հանդիպեցին իրար և գլուխ գլխի զարկեցին։

Սովորաբար մի բոպէի մէջ գոմէշներն իրար հասկանում են։ Եթէ կռուողներից մինը համեմատաբար թոյլ է, նա առանց կատաղեցնելու իւր հակառակորդին խսկոյն հեռանում է, իսկ եթէ ուժ ուժի է հանդիպում՝ կռիւը շարունակվում է և հետզհետէ այնպէս է թնդվում, որ էլ բաժանել չի լինում, և տևում է շարունակ մի քանի ժամ։ Դուրսունը, թէև զօրաւոր հակառակորդի էր հանդիպել, բայց փախուստ տուողներից չէր։ Նա իւր կեռ-կեռ պոզե-

բով Հակառակորդի ականջատակերին ու քթին խփելով ու վիրաւորելով աւելի շուտ զայրացրեց և կռիւը շատ շուտով թնդացրեց։ Հակառակորդը մի քանի անգամ չոքեց, բարձրացաւ, տեսաւ որ բանը վատ է գնում, բայց ուշ էր, էլ յետ դառնալ չէր կարող, անճարացած մինչև վերջը պիտի տանէր Դուրսունի Հարուածները։ Վախենում էր յետ քաշուիլ, որովհետև իւր կատաղած Թշնամին օգուտ քաղելով այդ Հանգամանքից կարող էր նրան մահացու Հարուած Հասցնել։ Գլուխը մի տեսակ վահան է, որով գոմէշը թէ կռվում և թէ պաշտպանում է իրեն. գլուխը Հեռացնելուց յետոյ՝ նա զինաթափ է լինում ու մնում է անպաշտպան թշնամու յարձակմունքից։ Եթէ փախչելու էլ լինի, պէտք է այնպէս շուտ և արագ կատարէ այդ բանը՝ որ թշնամին չկարողանայ ետևիցը Հասնել։ Այս անգամ մեր օտարական գոմէշը լաւ երագ չէր տեսել։ Նա երկար ընդդիմանալուց յետոյ փախչելու փորձ արաւ, բայց կատաղած Դուրսունը Հասաւ նրա ետևից և իրեն յատուկ գոմշային ուժով այնպէս խփեց նրա փորին, որ խեղճը դլորուեց տակառի նման և ձորաբաշից ցած ընկնելով ջարդուփշուր եղաւ։ Գոմշի տերը, որ մի խեղճ գիւղացի էր, շատ ուշ վրահասաւ։ Բայց մեր գիւղացիք նորան չթողեցին շլինքը ծուռ, իսկոյն իրենց մէջ փող ժողովեցին և նրա Համար մի գոմէշ առան։ Այդ բանում իմ Հայրս աւելի օգնեց, որովհետև մեղաւարտը մեր Դուրսունն էր։

Դուրսունը լինելով քաջ ըմբիշ, միևնոյն ժամանակ և ուժեղ լծկան էր։ Հարկաւոր էր արդեօք դժուար տեղից մի Հսկայական գերան դուրս քաշել, ցեխում և զառիվայրի տակ մնացած ծանր սայլը վերև Հանել, կարճ «առաւել» ունեցող Հողի ակուր մի լծով տեղ Հասցնել. ահա այդպիսի նեղ և դժուար տեղերում Դուրսունի օգնութիւնը անՀրաժեշտ էր։ Այդպիսի ծանր ուժ Հարկաւոր եղած տեղերում, Դուրսունի կողմի լծակաբաժինը միշտ կարճա-

ցնում էին, որ ասել է ծանրութեան երկու բաժինը միշտ նրան էին տալիս, որ ընկերը կարողանայ հետը քաշել: Նա դալը չէր. դժուարութիւնից փախս տալու համար շատերի պէս սամիք չէր կոտրատում: Նրա ժամանակ գիւղումն էլ տուն չմաց, որ Դուրսուն անունով մի շիշակ չունենար: Ամենքն էլ անտեղի կերպով իրենց գոմշաճաղերի անունը Դուրսուն էին դնում, որ նրա պէս քաջ, նրա պէս խելօք և ուժեղ լինի:

V

Դ ո ւ ր ս ո ւ ն ի վ ա ր ք ը: Լաւ վարք ու բարք ունենալը շատ օգտակար բան է:

Գողութեան սովոր շունը պահող չի ունենալ, դալը եզը շուտով սպանդանոց կ'ուղարկուի: Մեր Դուրսունը իւր կեանքի վերջին օրերում, իւր աւելի խելահաս ժամանակը մի տարօրինակ բնաւորութիւն ստացաւ: Նա սկսեց գողութիւն անել և այն էլ ոչ թէ գոմշավարի, այլ մարդավարի, հասկանալով, որ իւր արածը մի արգելուած բան է: Շատ անգամ կէս գիշերին վեր էինք կենում և տեսնում որ Դուրսունը տաւարի մէջը չէ: Երկիւղ չունենալով ոչ դայլից և ոչ գողից, էլ չէինք փնտռում. յուսալով, որ ցերեկով կ'երևայ: Բայց ընդհակառակը Դուրսունի կորուստը մինչև ցերեկ չէր տևում, նա դեռ լուսը չբացուած՝ էլի դալիս էր իւր տեղը նստում, որպէս թէ ոչ մի տեղ զբոնացած չլինի: Սրա վերայ հայրս ասաց, որ Դուրսունը գնում է գողութեան, բայց դա վտանգաւոր բան է, կարող են սպանել, հարկաւոր է գիշերները կապել: Հօրս նախազգուշութիւնը երբեմն կատարում էինք և երբեմն մոռանում, բայց լաւ ստուգեցինք, որ յիրաւի մեր Դուրսունը, ամեն անգամ կէս գիշերին վեր է կենում սուսուփուս, կամացկամաց առանց շիլթուն հանելու, բոլորովին գողավարի և

գնում Հարևան թուրքերի կորեկները մտնում լաւ արածում և գալիս էլ ետ իւր տեղը նստում։

Մի գեղեցիկ լուսնիակ գիշեր ձի հեծայ գնացի Դուրսունին գտայ կորեկի մէջ։ Նա այնպէս էր արածում, ինչպէս մի վայրենի. ամեն մի փունջ հակոսելիս՝ գլուխը բարձրացնում, այս ու այն կողմն էր նայում, որ ապահով լինի թէ իրեն տեսնող չկայ։ Ինձ իսկոյն նկատեց և այնպէս դուրս ընկաւ արտիցը, ինչպէս մի եղջերու, և մինչև տուն մի շնչում վազեց։

Կորեկները հնձուելուց յետոյ նա սովորութիւն արաւ մտնել այգիքը։ Այգի մտնելիս՝ չափարը չէր ճմռռում, որ ձայն լսուի, այլ փնտռում էր ցածր տեղ և կապիկի ճարպիկութիւնով ոստնում վերայից։ Սրա վրայ շատ չանցաւ մեր Դուրսունը գողութեան պատիժը ստացաւ, ըստ որում ասած է՝ «Ցատն ամեն օր գաթա չի ուտիլ»։

Մի առաւօտ՝ տաւարը հանդ տանելու ժամանակ, Դուրսունիս գտայ արիւնի մէջ շաղախուած։ Սկսեցի բղաւել—վա՜յ, ամի, վա՜յ, ազի. . . Ամիս ու ազիս եկան և զընելով տեսան, որ Դուրսունի ետևի աջ օմբին այնպէս են խփել կացնով, որ մինչև քուփը ներս է գնացել։ Ցայտնի էր, որ մի որևիցէ բաղում է պատահել այդ չարագործութիւնը, բայց ով կ'ասէր, որ ինքն է արել։ Սկսեցինք դեղուդուղ անել և վերքը շատ ուշ լաւացաւ։ Այնուհետև մեր Դուրսունը այլ ևս գողութեան չգնաց և իւր խփողին էլ վերջիվերջոյ ինքը գտաւ։

Մէկ անգամ տաւարը տանում էի դէպի առուն ջուր տալու։ Երբ որ Հասայ առուի ափը, մի կնիկարմատ նոր լցրել էր կուժը և ուզում էր վերադառնալ։ Բոլոր տաւարները վրանկան ջրին, իսկ Դուրսունը այդ կնկանը տեսաւ թէ չէ՝ իսկոյն դուրս ընկաւ տաւարի մէջից և մի քիչ տեղ փախչելով՝ յետ դառաւ և սկսեց աչքերը պլըշացնել կնկայ վերայ։ Կնիկն այնպէս վախեցաւ, որ կար-

ծեց թէ հիմի ուր որ է Դուրսունը պիտի իրեն ոտնատակ տայ։—Ա՛ դոմէշ, ինչի ես էդպէս մտիկ տալիս, ես խօմ չեմ խփել քեզ—ասաց կնիկարմատը։ Ես այդ կնկանից Դուրսունի չափ վախեցայ, ըստ որում նրանից ամեն բան սպասելի էր։ Վերադառնալով տուն, այս անցքը պատմեցի մօրս։ Վերջն ասուզուեց, որ Դուրսունին կացնով խփողը յիշեալ կնիկարմատն էր եղել։

VI

Դուրսունի մահը։ Մեր Դուրսունը դեռ լուր առոյգ հասակի մէջն էր, որ մի սարսափելի ցաւ եկաւ և անխնայ կոտորեց բոլոր տաւարներին։ Ահա այդ ցաւին զոհ գնաց և մեր Դուրսունը։ Մեր գիտցած բոլոր հնարները գործ դրինք՝ թէ արիւն առնել էր, թէ ասռը ջուր ածել վերան, թէ սուրբի չորս կողմը պտըտցնել, թէ սուրբը հող և օրհնած աղ ուտեցնել, թէ մատաղ անել և ճրագ վառել - բայց բոլորը զուր անցաւ, Դուրսունը չփրկուեց։ Ես յիշում եմ նրա հիւանդութիւնը, նրա քաշած չարչարանքը, նրա աղիողորմ նայուածքը։ Այդ տարին քառասուն գլուխ տաւար կոտորուեց մեր տանից, բայց մենք ամենքս լաց եղանք միայն Դուրսունի վերայ, այնքան սիրելի էր նա։ Հայրս նրա գլուխը չթա-

ՊԱՐՈՅԲ ՀԱՅԿԱԶՆ

(ՊՐՈՅԵՐԵՍԻՈՍ)

(Շարունակութիւն)

«Եւ մինչ նոքա (Սահակ և Մեսրոպ) զմերն յուսային գարձ, և պատուասիրել իմով ամենիմաստ արուեստիւս և կատարելագոյն յարմարութեամբս, համայն և մեք փութապէս դիմեալք ի Բիւզանդիոյ, յուսայաք հարսանեաց պարել՝ անվեհեր երագութեամբ կըրթեալք, և առաղաստի ասել երգս, արդ փոխանակ խրախճանութեանն ի վերայ գերեզմանի՝ ողբս ասելով՝ ողորմելի հառաչեմ. ուր և ոչ տեսութեանն ժամանեցի աչաց նոցա կափուցմանց, և լսել զվերջին բարբառն և զօրհնութիւն»։

Խորենացի

Գ.

Դիշերային խաւարը պատել էր Արարատեան դաշտը։ Օշական գիւղի սուրբ Մեսրոպի անապատում ոչ մի լոյս չէր երևում։ Ամեն արարած խոր քնի մէջ էր, ամեն ինչ ընկղմուած էր խուլ լռութեան մէջ։ Չէր լսվում և գիշերահսկիկ անապատականների մշտական սաղմոսերգութիւնը, միայն մի մատուռի մէջ ծխվում էր իւղային կանթեղը, և որպէս տխուր հոգու թախծալի արտայայտութիւն, տարածում էր իր շուրջը աղօտ լուսաւորութիւն։

Մատուռի մէջ գրած էր մի շիրիմ։ Կանթեղի լոյսը ուղիղ թափվում էր նրա վրայ և երևան էր հանում նրա անշուք կազմութիւնը։ Շիրիմը կառուցուած էր սև քարից և, կարծես թէ, փոխաբերական իմաստով արտայայտում էր այն մեծ մարդու հոգեկան դառնութիւնը, որ

անմխիթար արտմութեամբ իջել էր այդ սգաւոր դամբարանի մէջ։

Շիրիմի մօտ, մերկ յատակի վրա ծունր իջած, խոնարհուած էր մի մարդ։ Նրա գլուխը հանգչում էր սառն տապանաքարի վրա, և երկայն, թաւամազ ծամերը ծածկել էին նրա սև մակերևոյթը։ Այդ դրութեան մէջ նա անշարժ էր, անշարժ էին և նրա թևքերը, որոնցմով գրկել էր շիրիմը։ Ոչ մի մրմունջ, ոչ մի հառաչանք չէր աղմկում այդ ողբանուէր սգաւորի տխուր լռութիւնը, միայն կիսախուփ աչքերից արտասուքի մեղմ վտակները հոսում էին սառը քարի վրա։

Երկար նա, այնպէս գետնատարած, գրկել էր շիրիմը, երկար նա, այնպէս ճակատը դրած սառը քարի վրա, կպել էր նրան և, կարծես, աշխատում էր դուրս կոչել մթին դամբարանի միջից այդ մեծ հանգուցեալի ուրուականը,—աշխատում էր տեսնել նրան, խօսել նրա հետ և թափել նրա առջև իր սրտի վշտերը։

Այնպէս գետնատարած, լուռ ողբում էր նա, մինչև անապատի զանգակատանից լսելի եղաւ վաղորդեան կոչնակի թախծալի հնչիւնը։ Այդ մեղմ հնչիւնը սթափեցրեց նրան իր հոգեկան խորին յափշտակութիւնից։ Գլուխը վեր բարձրացրեց և մի առանձին սոսկումով նայեց իր շուրջը։ Օրը լուսանում էր... Կարծես նա վախենում էր, որ իրան կը տեսնէին այստեղ։ Ոտի կանգնեց . . .

Ո՞վ էր այդ գիշերային այցելուն, այդ ո՞ւմ դամբարանի վրա էր թափում իր դառն արտասուքը։

—Խաղաղութիւն քո սուրբ ոսկերացը, ով երանելի Հայր,—բացականչեց նա, սգաւոր Հայեացքը ձգելով շիրիմի վրա։ – Երկար ճանապարհորդութիւններից յետոյ, քո դժբախտ աշակերտը վերադառնալով Հայրենիք, մեծ յոյս ունէր՝ քո գրկի մէջ մխիթարութիւն գտնել և մխիթարել քեզ։ Բայց նա չարժանացաւ քո քաղցր տեսութեանը, չը լսեց քո բարի շրթունքների վերջին օրհնութիւնը,

և ոչ իր ձեռքով փակեց այն սրատես աչքերը, որոնք Հայրենիքի հեռու և մերձ աղէտները տեսնելով, փոխանակ արտասուք թափելու, ամեն ջանքով աշխատում էին դարման տանել։ Քո պատուիրանաց համեմատ, գնացի, անցայ երկրից երկիր, քաղաքից քաղաք, այցելեցի գիտութեան բոլոր տաճարները, և լի հմտութիւններով վերադարձայ իմ Հայրենիքը։ Բայց ո՞վ այսուհետև գին կը դնէ այն մտաւոր մթերքին, որ բերել եմ օտար աշխարհներից [1])։ Դու և քո վեհափառ գործակիցը (Սահակ) միայն հասկանում էիք, թէ ի՞նչ է ճշմարիտ լոյսը և ուղիղ վարդապետութիւնը։ Անգութ մահը միաժամանակ խաւարացրեց այդ երկու արեգակները, և մութը տիրեց հայոց երկրին։ Լաւերը գնացին, այժմ նրանց փոխարինում են վատերը։ Մեր սուրբ Լուսաւորիչ հօր աթոռը ժառանգել են ասորիները, կամ այնպիսի հայ հ ա յ ր ա պ ե տ ն ե ր, որոնք աշխատում են աւելի բռնակալ պարսից Դռանը հաճոյանալ, քան թէ Յիսուս Քրիստոսի սուրբ եկեղեցուն [2])։ Մեր այժմեան վ ա ր դ ա պ ե տ ն ե ր ը [3]), որոնք պէտք է հոգևոր և բարոյական ուղղութիւն տային ժողովրդին, որոնք պէտք է ուսուցա-

---

[1]) Ո՞վ այսուհետև զմերս յարգեսցէ զուսումն, ո՞վ ուրախասցի ընդ առաջադիմութիւն աշակերտիս, ո՞վ զհայրականն բարբառեսցի զուարճութիւն . . .

Խորենացի

[2]) Ողորմի՛ մ քեզ, եկեղեցի Հայաստանեայց, խրթնացեալ ի բարեկարգութենէ բեմբին, ի քաջէն զրկեալ Հովուէ և Հովուակցէ (կաթողիկոսից և թագաւորից)։ Ոչ ես տեսանեմ զբանաւոր քո հօտ ի վայրի դալարւոջ և առ ջուրս հանգստեան տածեալս, և ոչ փարախ հաւաքեալ՝ զդուշանալով ի գայլոց, այլ ցրուեալս անապատաց և գահավիժութեանց։

Խորենացի

[3]) «Վարդապետք տխմարք և ընդինքնահաճք, անձամբ առեալ պատիւ և ոչ յԱստուծոյ կոչեցեալ, արծաթով ընտրեալք և ոչ Հոգւով, ոսկեսէրք, նախանձոտք, թողեալ զհեղութիւն, յորում Աստուած բնակէ, և գայլք եղեալ՝ զիւրեանց հօտս գիշատելով»։

Խորենացի

նէին նրան ճշմարիտը և արդարը,—իրանք աւելի ևս մոլորեցնում են ժողովուրդը: Տգէտ են դրանք, և միևնոյն ժամանակ ինքնահաւան: Առանց որևիցէ մտաւոր և բարոյական արժանաւորութեան՝ ստացել են կարգ և աստիճան: Աւելի արծաթով են ընտրված, քան թէ Հոգոյն սրբոյ շնորհիւ: Եւ այդ պատճառով, իրանք ևս արծաթասէր են և նախանձոտ: Քրիստոնէական առաքինութիւնը բացակայ է նրանցից, և թողնելով հեզութիւնը, որի մէջ Աստուած է բնակվում, իրանք գայլեր են դարձել և իրանց հօտն են գիշատում: Մեր կ ր օ ն ա ւ ո ր ն ե ր ը [1]), մեր վանական ա բ ե ղ ա ն ե ր ը, որոնք պէտք է ջերմ հաւատքի և եղբայրսիրութեան օրինակ տային ժողովրդին, որոնք պէտք է վառէին նրա մէջ սիրոյ և միաբանութեան ոգին, —իրանք աւելի ևս երկպառակութեան սերմեր են ցանում: Դրանք՝ միայն փարիսեցու կեղծաւորութեամբ, միայն արտաքին բարեպաշտութեան դիմակով խաբում են ժողովրդին, բայց ներքուստ են՝ սնափառ, պատուասէր, քան թէ աստուածասէր: Իրանց՝ աշխարհի վայելչութիւնից անջատուած և մարդկային հասարակութիւնից հեռացած ձևացնելով, վանքերի խուլ պատերի մէջ վայելում են ամբողջ աշխարհը: Մեր վ ի ճ ա կ ա ւ ո ր ն ե ր ը [2]), որոնք պէտք է պահպանէին ժողովրդի մէջ իրաւունքը և արդարութիւնը, որոնք պէտք է հոգ տանէին եկեղեցու բարեկարգութեան համար,—իրանք աւելի ևս խախտում են նրա հիմքերը: Եկեղեցու այդ ծոյլ, անհոգ կառավարիչները, իրանց ժամանակը վատնում են զրախօսութեամբ

---

[1]) «Կրօնաւորք կեղծաւորք, անձնացոյցք, սնափառք, պատուասէրք քան թէ աստուածասէրք»: Խորենացի

[2]) Վիճակաւորք հպարտք, դատասացք, զրաբանք, ծոյլք, ատեցողք արուեստից և վարդապետական բանից, սիրողք վաճառաց և կատակերգութեանց»: Խորենացի

և կատակերգութիւններ լսելով խնճոյքների մէջ։ Ամենի է նրանց դիտութիւնը և վարդապետական խօսքը, և սիրելի է նրանց եկեղեցու խորհրդավաճառութիւնը։ Սիմոնականութիւնը այդ շահասէրների ձեռքով իր ծայրայեղ անամօթութեանն է հասել։ Ընչին մամոնայի համար, նրանք ամեն տարի հարիւրներով և հազարներով բազմացնում են եկեղեցու անպիտան պաշտօնեաների թիւը։ Ցիշեալ անկարգ դատարակողների շնորհիւ, ի՞նչ տեսակ սերունդ է պատրաստվում այժմ, ի՞նչ է մեր դրպրոցների աշակերտաց վիճակը [1]։ Այլ ևս առաջուայ սէրը դէպի ճշմարիտ գիտութիւնը, և առաջուայ եռանդը դէպի օգտաւէտ ուսումը չէ մնացել։ Մեր դպրոցները կրթում են մի ծոյլ, դատարկամիտ սերունդ, որը դեռ ոչինչ չը սովորած, աշխատում է երևելի ուսուցչաբան ձևանալ, որը դեռ բոլորովին տգէտ լինելով սուրբ գրքերի մեկնութեան մէջ, սկսում է վարդապետութիւններ անել։ Դպրոցը, այդ սուրբ եկեղեցու սուրբ նախագուիթը, չէ սերմանում մանուկների սրտում այն մաքուր և սրբազան սերմերը, որ նրանք ապագայում եկեղեցու և հայրենիքի հաւատարիմ զաւակներ դառնային, որ նրանք ճանաչէին իրանց պարտքը դէպի երկինքը և դէպի աշխարհը—մարդկութիւնը։ Այժմեան դպրոցը, ընդհակառն, խեղդում, ոչնչացնում է մանուկների սրտում այն դեռաբոյս ծիլերը, որոնք ապագայում աճելով և ծաղկելով, կարող էին բարի պտուղներ տալ . . .

Նա փոքր ինչ կանգ առեց և բոպէական լռութիւնից յետոյ շարունակեց.

—Ահա այսպիսի անձանց ձեռքումն է եկեղեցու տնտեսութիւնը և ժողովրդի հոգևոր ու մտաւոր կրթութեան գործը։ Իսկ մենք։—Մենք այժմ համարվում

[1]) «Աշակերտք հեղգ առ ուսումն և վայթ առ ի վարդապետն որք նախ քան զտեսութիւնն աստուածաբանք» Խորենացի

ենք ա ղ ա ն դ ա ւ ո ր ն ե ր [1]: Տգէտ, խաւարամիտ և կեղծաւոր կղերը հալածում է մեզ: Մեր գրաւոր աշխատութիւնները համարում են վնասակար [2]. մեր ուսումը, մեր վարդապետութիւնը համարում են մոլորեցուցիչ: Մի տէր, մի մեծ չը կայ, որ սանձահարէ այդ նախանձոտ, չարամիտ պարեգօտաւորների զրպարտութիւնները [3], որոնք ամեն ստախօսութեամբ գրգռում են միամիտ ժողովրդին մեր դէմ և արգելք են դնում մեր գործունէութեանը: Դու, ո՛վ երանելի Հայր, քո հզօր գործակցի (սուրբ Սահակի) հետ, ձեր աշակերտներից ստեղծեցիք եկեղեցականների մի նոր սերունդ: Դրանց թիւը փոքր չէր: Չը բաւականանալով այն ուսումով, որ ստացել էին նրանք ձեր հոգաբարձութեան ներքոյ, դու և քո մեծ գործակիցը ուղարկեցիք նրանց օտար երկրներում կատարելագործուելու: Նրանք գնացին և վերադարձան գիտութեան մեծ պաշարով: Բայց ի՞նչ եղաւ նրանց վախճանը: Խաւարամիտ կղերը շատերին թոյլ չը տուեց, որ ներս մտնէին Հայրենի երկրի սահմաններից [4], և որոնք

---

[1]) «Այլ ասեն. ա ղ ա ն դ ա ւ ո ր է: Եւ զայս ստէպ ծանուցանել ամենեցունց ճեպէին. զորս հաւատացուցեալ ի տկարամտաց՝ թերի վարդապետութիւն շնորհին որ էր ի յիս, հայեցուցանէին». Ղազար Փարբեցի

[2]) «Երանելի փիլիսոփոսն Մովսէս (Խորենացի), որ արդարև մինչդեռ էր ի մարմնի՝ ցանկ երկնային զօրացն էր քաղաքակից. ո՞չ ապաքէն ի տեղւոջէ ի տեղի աբեղեանդ Հայոց հալածական արարին: Ո՞չ զլուսաւորիչն և զաղիտահալած զգրեանս նորա առ անդիտութեան «փ ա թ ա ղ ի կ է ս» կոչէին» . . . Ղազար Փարբեցի

[3]) «Ո՞վ կարկեսցէ զյանդգնութիւնն ընդդէմ առողջ վարդապետութեանն հակառակ յարուցելոցն, որք ամենայն բանիւք քակտեալք և քայքայեալք՝ յոլովս փոփոխեն վարդապետս և բազում գիրս . . . Ո՞վ զնոսա ըմբերանեսցէ սաստելով, և զմեզ սփոփեսցէ գովելով, և չափ դնէ բանի և լռութեան»: Խորենացի

[4]) «Անարատ և յամենեցունց յարգելի յոյսն՝ տէր Խոսրովիկ, չև և ս հասեալ ի սահմանս մեր՝ մինչդեռ դայր ի Ճանապարհի և լուան աբեղայք) որպէս ի վերայ Թշնամւոյ ընդդէմ զինեցան՝ ասելով. «Ահա ո՞ւր դայ միւս Թարգմանն»: Եւ օրհնելոյն ի հեռաստանէ լուեալ զգռնչիւն մահաձայն աղեղանցն՝ աղօթեաց առ Բարձրեալն և վաղվաղակի ընկալաւ զխնդիրն, որում և տենչալի նշխարացն այլք՝ և ոչ մեք, արժանի եղեն ընդունակութեան»: Ղազար Փարբեցի

մտան՝ Հալածուեցան... Այժմ Հայրենիքի այդ անձնազոհ մշակները թագուստի մէջ են ապրում և միայն գաղտնի են գործում։ Նրանք համարձակութիւն չունեն օտար աշխարհներից բերած գիտութեան պաշարը ժողովրդին մատակարելու։ «Թարգմանն» անունը մեր վերաբերութեամբ ծաղրական և նախատական անուն է դարձել հընամոլ կղերի բերանում։ Մենք, որ ամեն ջանք գործ էինք դնում, աշխատում էինք, և այժմ աշխատում ենք, որ Հայը Հայոց լեզուով խօսէ իր տան մէջ, որ Հայը Հայոց լեզուով աղօթէ Աստուծոյ տան մէջ,—մենք, որ աշխատում էինք, և այժմ աշխատում ենք՝ ամեն ինչ Հայացնել, ամեն բանի ազգային դոյն տալ,—մենք, որ քո ստեղծած տառերով թարգմանեցինք բոլոր սուրբ գրքերը, և այդ աստուածապարգև տառերը աշխատում էինք մտցնել Հայոց կեանքի և գործածութեան մէջ,—մենք, որ մեր ամեն ուժերը գործ էինք դնում, որպէս զի մեր դպրոցները, մեր եկեղեցին ազատ պահենք նենգաւոր յոյնի, ժանտ պարսկի և խաբեբայ ասորու վնասակար ազդեցութիւններից,—մենք այժմ հալածվում ենք մեր աշխատութիւնների համար, և հալածվում ենք ովքերից, —մերայիններից . . .

Վերջին խօսքերը արտասանելու ժամանակ, նրա ձայնը վրդովմունքից խեղդուեցաւ և նրա աչքերում փայլեց բարկութեան կրակը։

—Նայիր, ով սուրբ Հայր, նայիր հոգւոյ աչքերով, տես իմ ցաւալի վիճակը։ Այդ ճանապարհորդական ցուպը ձեռիս, այդ պարկը ուսիս, այդ հնոտի հագուստը հագիս, մի ողորմելի մուրացկանի նման, եկել, հասել եմ այստեղ։ Մեր վանքերը, որոնց մէջ ամեն օտարական օթևան և սնունդ է գտնում,—մեր վանքերը ինձ գիշերելու անգամ մի անկիւն չէին տալիս, և շատերի մէջ ինքս չէի համարձակվում մտնել, որպէս զի չընկնեմ չարամիտների որոգայթի մէջ . . . Շատ օրեր քաղցած եմ

մնացել, շատ անգամ ստիպուած եմ եղել մոռնալ բարի գիւղացիների դռանը և մի պատառ հաց խնդրել։ Թաղցրել եմ իմ ոտ կամ ինչ մարդ լինելս . . . Եւ այն մարդը, որ Բիւզանդիայում Մարկիանոս կայսրին զարմացնում էր իր իմաստութեամբ և նրա հիւրասիրութիւնն էր վայելում,—այժմ այդ թշուառը իր հայրենիքում գլուխը ցոյց տալու համարձակութիւն չունի . . .

Նրա զայրացած դէմքի վրա դարձեալ նշմարուեցան բարկութեան ցնցումները, որոնց ըոպէական լռութիւնից յետոյ փոխարինեց խաղաղ հեզութիւն։

—Իսկ այդ բոլոր հալածանքները չեն կարող վհատեցնել ինձ, չեն յուսահատուի և իմ ընկերները։ Մենք, որպէս անձնազոհ զինուորներ, ուխտել ենք պատերազմել խաւարի և տգիտութեան դէմ,—ուխտել ենք պատերազմել վաճառուած կղերի դաւաճանութեան և չարիքների դէմ, - այն կղերի, որ մեր արքունի գահը կործանող և մեր հայրապետական աթոռը խորտակող պարսկի ձեռքում այժմ մի յարմար գործիք է դարձել՝ մեր աշխարհի մնացած զօրութիւնները ոչնչացնելու համար . . .

Նա կրկին ծունր իջաւ շիրիմի մօտ և նրա շրթունքները համբոյր մատուցին սառը տապանաքարին։

—Երդվում եմ այս նուրբ շիրիմով,—բացականչեց նա,—և կրկնում եմ իմ ուխտը, որը կը մնայ անխախտ մինչև իմ կեանքի վերջին շունչը։ Հալածանքը, նեղութիւնը չեն կարող մեռցնել այն հոգին, որը դու, ով երանելի հայր, ներշնչեցիր իմ սրտի մէջ։ Ես միշտ հաւատարիմ կը մնամ այն մեծ գործին, որի առաքելութեան համար կոչուեցայ։ Քո բարձր նպատակը մեր հայրենիքի փրկութեան մասին, կրթութեան և լուսաւորութեան միջոցով, պէտք է իրագործուի։ Այն հիմքը, որ հմուտ ձեռքով դրեցիր դու,—ես և իմ ընկերները կը շարունակենք նրա վրա շինուածքը։ Մեր անբախտ աշ-

խարհը կորցրեց քեզ, բայց քո հոգին և քո վսեմ միտքը կենդանի մնաց մեր սրտում։ Դու և քո հզօր գործակիցը, իրաւ է, թողեցիք աշակերտների մի փոքրիկ և անպաշտպան խումբ, բայց այդ աննշան խումբը իր փոքրամասնութեան մէջ մեծ և զօրաւոր կը լինի, որովհետև ներշնչուած է բարձր, հանրաազգային գաղափարներով . . .

Անապատի զանգակներն սկսեցին աւելի և աւելի բարձր հնչել։ Արշալոյսը շառագունել էր։ Դրսից լսելի էր լինում նոր զարթած թռչունների ձայնը։

Օտարականը կրկին և կրկին համբուրեց գերեզմանը, և վերջին անգամ իր տխուր հայացքը ձգելով սև տապանաքարի վրայ, վերցրեց իր ճանապարհորդական ցուպն ու պարկը և զգուշութեամբ դուրս եկաւ մատուռից։

Անապատի մէջ կատարվում էր վաղորդեան ժամերգութիւնը։ Աբեղաներն աղօթում էին։ Ծերունի ժամկոչը՝ միայնակ նստած եկեղեցու դռան հանդէպ և բուսական գոհ իր վիճակից՝ նայում էր դէպի զանգակատան բարձրութիւնը, որի վրա աղաւնիներն այդ ժամանակ մի առանձին բաւականութեամբ սեթևեթում էին միմեանց հետ։ Սպասաւորներից մէկը աւելում էր բակը։

Ժամկոչը հեռուից տեսաւ օտարականին։ Ուղևորի ցուպը, մէջքին կապած պարկը և մաշուած հագուստը առիթ տուին նրան մտածել, թէ մի որևիցէ մուրացկան պէտք է լինի, որ գիշերը պատսպարուել էր անապատում։ Բայց նրա մէջ կասկած պատճառեց մի բան, թէ ինչու այդ մուրացկանն այդպէս վաղ առաւօտեան թողնում է անապատը, այն ևս առանց եկեղեցին մրցնելու, կամ գոնէ նրա դուռը համբուրելու։ Նա կանչեց իր մօտ բակը աւելող սպասաւորին և հարցրեց.

— Տեսա՞ր այն մուրացկանին։

— Տեսայ,—պատասխանեց սպասաւորը կողքը քորելով։ — Նա դուրս եկաւ սուրբ Մեսրոպի մատուռից։

— Սուրբ Մեսրոպի մատուռի՞ց, — կրկնեց ժամկոչը զարմանալով։ — Այնտեղ ի՞նչ էր շինում։

—Ի՞նչ պիտի շինէր, ասաց սպասաւորը, շարունակելով կողքը քորել, — երևի մտել էր իր հին վարժապետի գերեզմանի վրայ «Հոգւոց» կարդալու։

—Ո՞վ էր նա։

—Չը ճանաչեցի՞ք։

—Հարիւրաւոր մուրացկաններ են գալիս այստեղ, ո՞ր մէկին կարող ես ճանաչել։

—Նա մուրացկան չէր։

—Ապա ո՞վ էր։

—Մովսէսը։

—Ի՞նչ Մովսէս։

—Խորենացին։

Ծամկոչը մնաց շուարուած։

—Աչքովդ տեսա՞ր, ճանաչեցի՞ր, խօսեցի՞ր նրա հետ։

—Ինքովս խօ չէի տեսնի, հէր-օրհնած, — պատասխանեց սպասաւորը, այժմ միւս կողքը քորելով։ —Հէնց այս երկու աչքերովս տեսայ, լաւ ճանաչեցի, բայց չխօսեց ինձ հետ։ Ես նրան ճանաչում էի այն ժամանակից, երբ այսքան տղայ էր։

Վերջին խօսքերի միջոցին նա ձեռքը մի կանգուն բարձրութեամբ բռնեց գետնի վրա, որ ցոյց տայ, թէ ինչ հասակի տղայ էր։

Ծամկոչը ձեռքով բազմախորհուրդ կերպով շփեց իր ճակատը և հազիւ լսելի ձայնով ասաց.

—Մեր հայր-սուրբերը նրան սրոնում էին . . .

—Նրան հիմա ինքը սատանան չի գտնի։

—Ինչո՞ւ։

—Դու չէ՞ս իմանում, որ Հռոմստանից նոր եկած վարդապետները բոլորն էլ կախարդներ են . . .

ՐԱՖՖԻ

(Կը շարունակուի։)

ՄԵՐ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԸ

II

ՍՈՒՐԲՆ ՄԵՍՐՈՊ ԵՒ ՀԱՅՈՑ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԸ

Լսելի ընթերցող, անցեալ անգամ ձեզ ծանօթացրի այն անձի հետ, որ գտաւ տպագրութեան արհեստը և նրանով ազատեց մեզ գրքերը արտագրելու տանջանքից. այժմ քեզ պիտի ծանօթացնեմ այն մեծ վարդապետի հետ, որ Գուտենբէրգից ոչ պակաս չարչարուեց և մեզ համար տառերը հնարեց։

Մեզանից քանի մի հազար տարի առաջ, մարդիկ քանի որ տգիտութեան մէջ էին դեռ, հնարել էին իրանց մէջ մի տեսակ պայմանական գրեր, որ այժմեան ոչ մի գրի ձևը չունէր, այլ ներկայացնում էր զանազան կենդանիների ու առարկաների պատկերները, որոնք առանձին-առանձին կամ մէկ-մէկու մօտ շարուելով, այլ և այլ մտքեր էին յայտնում, ճիշդ այնպէս՝ ինչպէս այժմ մենք բէբուսները ենք կազմում ու կարդում։

Փորձեցէք այդպիսի նշանագրերով կազմուած մի քանի տող բան կարդալ և կը տեսնէք, որ բաւականին դժուար են, իսկ բառերը ու խօսքերը կազմելը՝ էլ առաւել։ Ահա այդպիսի նշանագրերով էին նախնի ազգերն իրանց միտքը հեռաւորներին յայտնում և իրանց ժամանակակից անցքերը ապագայ սերնդին թողնում։ Բայց թէ ինչ մեծ անյարմարութիւններ ունէին այդ նշանագրերը, պարզ է. նախ՝ որ ամեն մէկ բառի համար մի տեսակ նշանագրեր էր հարկաւոր, իսկ լեզուի մէջ

հազարաւոր բառեր են մտնում, ապա ուրեմն և հազարաւոր նշանագրեր պէտք է ստեղծէին, և երկրորդ՝ ինչքան ժամանակ, ինչքան նեղութիւն պիտի կրէին մարդիկ, որ սովորէին այդ հազար ու մի ձևերով մտքեր յատնելը, չեմ ասում ամբողջ գրքեր գրելը։ Այդ անյարմարութիւնները տեսնելով, մարդիկ հետզհետէ փոխեցին նշանագրերի ձևերը և աւելի հեշտացրին, այն է՝ սկսեցին գրել մի ուրիշ տեսակ գրերով, որ բևեռագրեր կամ սեպաձև գրեր, որ մինչև այժմ ինչպէս շատ հին ազգերի մէջ, նոյնպէս և մեր երկրում՝ Հայաստանում, գտնվում են դրանց մնացորդները քարերի վրայ քանդակուած։

Այդ սեպաձև գրերը ևս մատչելի չլինելով ամենքին, Հարտաբ մարդիկ հարիւրաւոր տարիների ընթացքում աշխատելով վերջապէս մարդու ամեն մի ձայնի համար մի-մի փոքրիկ նշանագիր հնարեցին, ինչպէս՝ ա, ի, օ, ու և այլն, և պայման դրին, որ ամեն մարդ էլ այդ ձևերը տեսնելով, ա-ի, օ-ի, ու-ի ձայն հանէ։ Այդ նորահնար ձայնանիշներն ասուեցան տառեր, որոնք կցուելով մէկ-մէկու, կազմում են բառեր ու մտքեր։ Այս տառերը առաջիններից այն առաւելութիւնն ունին, որ անհամեմատ քիչ են թուով, հեշտ են մի-տ պահվում և գրելուց փոքր տեղ են բռնում։

Նայելով լեզուի կազմութեան, ամեն ազգ իր համար տառեր հնարեց և հեշտացրեց այդպէսով ուսումն ու գիտութիւնները։ Մի կողմը թողնելով հին ազգերի, ինչպէս յոյների, ասորիների, պարսիկների, հրէաների լեզուի տառերի գիւտը, որ Քրիստոսից հարիւրաւոր տարիներ առաջ հնարուած են, դառնանք Հայոց տառերի գիւտին, որ եղաւ Ս. Մեսրոպի ձեռքով 406 թուականին։

Մենք հայերս մինչև Ս. Մեսրոպի ժամանակները թէև գրքեր ունէինք, բայց բոլորը գրուած էին յոյների կամ ասորիների լեզուով և եկեղեցիներում Ս. Գիրքը կարդալուց, պէտք էր հմուտ թարգմանիչներ հայերէն բացատրէին՝ որ հասարակ ժողովուրդը բան հասկանար։ Պալոցներում ևս, որ մի քանի վանքերում միայն կային, աշակերտները փոխանակ հայերէնի, յունարէն ու ասորերէն էին սովորում, որ շատ խորթ էր նրանց ու դժուար հասկանալի։

Աշակերտի դրութիւնը շատ անտանելի էր. մի կողմից օտար լեզուի դժուարութիւնը, միւս կողմից արտագրելու չարչարանքը մաշում էր նրա սիրտը. ոչ ոք չկար, որ նրա նեղութիւնները թեթևացնէր, ուսումն ու գիտութիւնները նրա համար հեշտացնէր։

Բայց ահա չորրորդ դարում երևեցաւ Ս. Մեսրոպ, որ շատ հմուտ էր յոյն, ասորի և պարսիկ լեզուներին ու թագաւորի պալատում ատենադպիր էր առաջ, բայց յետոյ պաշտօնը թողնելով և վարդապետ ձեռնադրուելով քարոզում էր ու գիւղէ գիւղ ընկած սովորեցնում ժողովրդին։ Նա զգաց աշակերտի դառն դրութիւնը և մտածեց սեպհական նշանագրեր հնարել մայրենի լեզուի համար։ Նա իր միտքը յայտնեց այն ժամանակուայ Սահակ կաթողիկոսին, որ համեմատ գտնուելով՝ շատ ուրախացաւ և մի ժողով կազմեց Վաղարշապատ քաղաքում, ուր ներկայ էին մեր աշխարհի գիտնականները և ինքը Վռամշապուհ թագաւորը։

Այդ ժողովում թագաւորը յայտնեց, որ Միջագետքում իր ճանապարհորդութեան ժամանակ Հաբէլ անունով մի քահանայ նրան ասել էր թէ այնտեղի Դանիէլ եպիսկոպոսը հայերի համար տառեր է հնարել և իրանից խնդրում է թոյլ տալ Հայաստանում գործադրելու, բայց ինքը խառնուած լինելով, ուշք չէ դարձրել։ Այս բանի վրայ ամենքն ուրախացան և Վահրիճ անունով մի մարդ շուտով ուղարկեցին Դանիէլի մօտ, որ այն տառերը բերէ, բայց երբ ստացան ու առ ժամանակ գործադրեցին՝ տեսան որ շատ ձայներ պակաս են, ուստի Մեսրոպ ինքն անձամբ գնաց Դանիէլի մօտ, որ նրա խորհրդածութիւնով կարողանայ թերին լրացնել, միայն այնտեղ օգուտ չտեսնելով՝ ճանապարհորդեց շատ տեղ և դիմեց շատ երևելի յոյն լեզուագէտների, բայց ոչ մէկից էլ իր ցանկացած արդիւնքը չստացաւ։ Նա ամենևին չյուսահատուեց իր անյաջողութեան վրայ, այլ աւելի եռանդով սկսաւ գործը. մի գործ որից միայն կախուած էր Հայաստանի մանուկների փրկութիւնը։

Եւ ահա մի օր, երբ աղօթքի ժամանակ մտքով յափշտակուած էր, այնպէս երևեցաւ նրան իբր թէ մի ձեռք նշանագրեր էր գրում մի քարի վրայ, որոնց ձևերը իսկոյն տպաւորվում էին իր մտքի մէջ։ Նա տեսած ձևերն իսկոյն գրեց և Հռոփանոս անունով մի յոյն լեզուագէտի հետ կար-

գի դնելով բերաւ Հայաստան... Անցաւ մի փոքր ժամանակ և ահա Ս. Մեսրոպի ու Ս. Սահակի ձեռքով Հայաստանը լցուեց դպրոցներով, ուր հայ մանուկը բուն հայկական տառերն արտասանելով՝ ճիշտ ամենքի սիրտն ու հոգին։ Շատ առաջադէմ աշակերտները դուրս եկան այդ ժամանակները, որոնց Ս. Մեսրոպ և Ս. Սահակ ուղարկեցին՝ Կ. Պոլիս, Աթէնք, Աղէքսանդրիա, իրանց ուսումը կատարելագործելու։ Եւ այդ աշակերտների օգնութիւնովն էր՝ որ թարգմանեցին յունարէնից Աստուածաշունչը և այլ մատեաններ և մեր մէջ ծաղկեցրին հայկական դպրութիւնը։ Բայց Ս. Մեսրոպի հնարած տառերը երկաթագրեր էին, որոնցով գրուած են մեր շատ հին գրքերը, իսկ այժմ մեայն գլխատառերում ենք գործածում։ Դրանք էլ շատ փոփոխութիւններ կրեցին, մինչև որ հասան այն կոկիկ ձևին, որ տեսնում ենք այժմ մեր գրքերում և որն օրէցօր աւելի ևս կատարելագործվում է։

Թէ ինչ մեծ ծառայութիւն արեց Ս. Մեսրոպը մեզ՝ հայերիս համար սեպհական տառեր հնարելով, հասկանալի է։ մենք այսօր եթէ մի պարծենալու բան ունինք, այդ մեր հայկական քաղցր լեզուն է, որ կենդանի է մնացել և պիտի մնայ, քանի որ մենք ևս՝ հետևելով Ս. Մեսրոպի օրինակին՝ կ'աշխատենք միշտ սովորել և սովորեցնել ուրիշներին։

Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

ԷԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բ.

Ես հաստատ գիտեմ, որ փոքրիկ ընթերցողը դեռ չի մոռացել էլեքտրականութիւն բառը և գիտէ որտեղից է այս բառը յառաջ եկել։

—Դեռ մի բան էլ աւել գիտեմ,—կ'ասի համարձակ ընթերցողը։

—Ապա ի՞նչ գիտես, ասա տեսնեմ։

—Բոլոր մարմինների մէջ յառաջ է գալիս էլեքտրականութիւն, երբ մենք քսում ենք նրանց մահուդով։

— Զատ լաւ, յետոյ։

— Յետոյ այն, որ մի քանի մարմինների մէջ, էլեքտրականութիւնը մնում է այնտեղ, որտեղ քսուել է մահուդով. ուրեմն այս մարմինների մէջ քսելուց առաջ եկած էլեքտրականութիւնը չի անցնում, չի հաղորդվում միւս մասերին. սրա համար այս տեսակ մարմինները (ապակի, ծծումբ, կնքամոմ, խէժ,) ասվում են վատ — հաղորդողներ, իմ կարծիքով, լաւ է ասել՝ վատ— անցկացնողներ։

— Զատ բարի, ես ընդունում եմ քո կարծիքը, էլի ուրիշ քան ունիս ասելու։

— Ի՞նչի չունիմ, – պատասխանում է փոքրիկ ընթերցողը։

— Իսկ միւս մարմինները, շարունակում է նա, եթէ մի տեղ քսելով առաջ է գալիս էլեքտրականութիւն, նա անցնում է բոլոր մնացած մասերին, սա է պատճառը, որ երբ ձեռքով բռնում ենք մետաղի կտորը և քսում ենք մահուդով՝ էլեկտրականութիւն չի երևում, որովհետև մետաղից էլեկտրականութիւնն անցնում է մեր մարմնին, այնտեղից էլ երկրին, որտեղ անհետանում է. այս տեսակ մարմինները (մետաղներ, բոյսեր, կենդանիները) ասվում են լաւ—հաղորդողներ, որ՝ էլի իմ կարծիքով, պէտք է ասել՝ լաւ—անցկացնողներ։

Փոքրիկ ընթերցողի ասած լաւ — անցկացնողները շատ նման են մի տեսակ շատախօս և թեթև մարդերին, որոնք հէնց որ մի բան են լսում՝ իսկոյն սկսում են սրան նրան պատմել, յետոյ իրանք էլ շուտով մոռանում են իրանց լսածը և ասածը, իսկ վատ – անցկացնողները նման են այն ծանր և խորամիտ մարդերին, որոնք ամեն մարդի չեն պատմիլ իրանց լսածը, այլ խոր կը պահեն իրանց մտքի մէջ։

— Բայց կարծես, փոքրիկ ընթերցող, մի բան մոռացել ես։

— Հէ, ես չեմ մոռացել,— գլուխը շարժելով և ժպտալով պատասխանում է նա, – ես շատ լաւ գիտեմ, որ եթէ վատ—անցկացնողներով առաձնացնենք լաւ—անցկացնողները և յետոյ քսենք մահուդով վերջինները՝ նրանք էլ ցոյց կը տան էլեկտրական յատկութիւններ. օրինակ՝ եթէ երկաթի կամ պղնձի ձողը (կտոր)

դնենք — պնդացնենք մի փոքրիկ շշի մէջ, յետոյ մի ձեռքով բռնենք շիշը, միւս ձեռքով մահուդը քսենք երկաթի կամ պղինձի ծայրին կը տեսնենք, որ երկաթը կամ պղինձը քաշում է դէպի ինքը թղթի փոքրիկ կտորներ։

— Ճատ գեղեցիկ, էլ աւել բան հարկաւոր չէ մեզ իմանալ մարմինների մասին, թէ չէ գլուխներս բոլորովին կ'ուռչի։ Հիմա մենք էլ, գիտնականների պէս, մի քանի հեշտ փորձեր անելով զուարճանանք։

Վերառնենք մի կտոր բարակ թուղթ, կտրատենք նրան մկրատով փոքրիկ մասնիկների և ածենք սեղանի վրայ. յետոյ վերառնենք մի կտոր լաւ կնքամոմ, (սուրգուչ), հատ կտոր պէտք է լինի, որ շուտ չի կոտրուի, և քսենք մահուդով կամ ֆլանելով, երբ մեք մօտեցնենք կնքամոմը թղթի այն փոքրիկ կտորներին՝ նրանք թռչելով կը կպչեն կնքամոմի ծայրին. եթէ կնքամոմով վերցնենք թղթի մի փոքրիկ կտորը, յետոյ այս կտորի միւս ծայրը մօտեցնենք մի ուրիշ կտորին, նա էլ կը կպչի և կախ կ'ընկնի առաջին կտորի ծայրից, յետոյ կարելի է մի քանի կտորներ այս կարգով բարձրացնել։ Բայց հետաքրքրելին այն է, որ մատի չափ թղթի կտորը կարելի է կանգնած պահել, եթէ քսուած կնքամոմը մօտեցնենք նրա մի ծայրին, մինչև անգամ թղթի կտորը կարելի է պար ածել՝ այս կողմ այն կողմ շարժելով կնքամոմը։ Այս ամենը կարող ենք անել, եթէ կնքամոմի տեղ վերցնենք փոքրիկ շիշ, ապակեայ ձող, մեր տատի սաթէ (քեահերբար) «տէր ողորմեան». Հարկաւոր է անպատճառ, որ օդը խոնաւ չլինի, որովհետև թաց օդը լաւ — անցկացնողներից է, հետևապէս կնքամոմից կամ ապակուց կարող է խլել էլեքտրականութիւնը՝ պտուտ-պտուտ անելով նրանց չորս կողմը։

Մեր այս զուարճալի փորձերից, ուշադրութիւնով կարդանք — թէ էլի ինչ փորձեր են անում գիտունները մարմինների էլեքտրական յատկութիւնները հասկանալու համար։

Նրանք, այսինքն՝ գիտունները վեն են առնում երկու փոքրիկ գնդակ, որոնք շինած են սովորական խցանից (պրօբկա), և այս գնդակները մետաքսի թելով կախում են առանձին-առանձին յենարանների վրայ, այս տեսակ կախուած

գնդակները ասվում են ճոճանակներ. յետոյ մահուդով քսած կնքամոմը մօտեցնում են ջոկ-ջոկ Ա և Բ գնդակներին, կնքամոմը դէպի ինքն է քաշում գնդակները և կպած պահում. երբ գնդակները տղրուկի պէս կշտանում են կնքամոմի էլեքտրականութիւնով՝ իսկոյն հեռանում են նրանից. եթէ այդ երկու կշտացած գնդակները մօտեցնենք իրարու, նրանք կը փախչեն մէկմէկուց, կամ ինչպէս ասում են՝ նրանք յետ կը մղեն մէկմէկու: Միևնոյն է լինում, երբ գնդակները կշտանում են չօթ (մետաքսի) թաշկինակով քսած ապակեայ ձողի էլեքտրականութիւնով. այսինքն՝ գնդակները մէկմէկու մղում են: Ընդհակառակը, երբ Ա գնդակը կշտանում է կնքամոմի էլեքտրականութիւնով, իսկ Բ ապակեայ ձողի էլեքտրականութիւնով՝ նրանք մէկմէկու քաշում են, կամ ինչպէս ասում են, ձգում են: Այստեղից երևում է, որ մի աղբիւրից (օրինակ, կնքամոմից) էլեքտրականութիւն ստացած մարմինները մէկմէկու մղում են իսկ զանազան աղբիւրներից (ապակուց և կնքամոմից) ստացած էլեքտրականութիւնները մէկմէկու ձգում են:

Այս փորձերի հիման վրայ գիտունները ասում են՝ որ երկու տեսակ էլեքտրականութիւն կայ — մէկը ապակու, կամ դրական էլեքտրականութիւն, միւսը կնքամոմի, կամ բացասական էլեքտրականութիւն: Ապակու և կնքամոմի էլեքտրականութիւն չի կարելի ասել, որովհետև երբ ապակին քսենք կատուի մորթով, նա կը տայ կնքամոմի էլեքտրականութիւն, նմանապէս կնքամոմը տալիս է ապակու էլեքտրականութիւն, երբ քսում ենք նրան մի տեսակ խառնուրդով ծածկուած կաշիով: Մենք այս գիտնական կանոնների տեղ դրած կածենք ուրիշ բառեր. մեք դրական էլեքտրականութիւնը կանուանենք — դրդ էլեքտրականութիւն, իսկ բացասականը — ուտ: Յետոյ կը տեսնենք ինչ բաներ են յառաջ գալիս ուտից և դրդից:

Ն. Ա.

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՐՕՄՕԳՐԱՖ

Վերջին ժամանակներս աշխատում են ամենայն միջոցներով հեշտացնել շատ օրինակների արտագրելը։

Մենք այստեղ կարճ կը նկարագրենք՝ թէ ինչպէս է պատրաստվում, «Խրօմօգրաֆ» ասուած գործիքը, որի միջոցով մի օրինակից 50—100 և աւելի օրինակ կարելի է տպել։

Պատրաստում են մի տեսակ զանգուած և թափում են հասարակ ցինկից շինած քառանկիւնի ամանի մէջ։

Առանձին թանաքով գրած օրինակը շուռ են տալիս այդ զանգուածի հարթ ու հաւասար մակերևոյթի վրայ և գրած թղթի միւս երեսի վրայով մի քանի անգամ ձեռք են քսում. 1—2 րոպէից յետ թղթի մի անկիւնից բռնելով զգուշութիւնով հեռացնում են նրան. զանգուածի վրայ մընում է յեղաշրջած գրութիւն, որի վրայ սպիտակ թուղթ դնելով և այդ թղթի միւս երեսից ձեռք քսելով, ստացվում է արտատպած օրինակ։

Երբ մի երեսն արդէն տրպում են թէ չէ, իսկոյն փոքր ինչ տաք ջրով թացարած սպունգով զգուշութիւնով լուանում են զանգուածը և նրա վրայ պատրաստում նոր գրուածքը։

Զանգուածը պատրաստելու համար առաջարկում ենք երկու տեսակ բաղադրութիւններ.

1) 88 մսխալ ջուր, 88 մսխալ գլիցէրին, $23^1/_2$ մսխալ ժէլատին, $11^3/_4$ մսխալ կաօլին (Առաջ. Լեբէգի)։

2) 45 մս. ջուր, 90 մս. գլիցէրին և $22^1/_2$ մս. ժէլատին։ (Առ. Բվէյսէրի և Գուզակի)։

Հասկանալի է, որ այդ քանակութիւնը կախուած է նրանից թէ ինչ մեծութեան խրօմօգրաֆ էք ուզում պատրաստել։ Զանգուածը մէկ դիւիմ հաստութիւն պէտք է ունենայ։

Վերոյիշեալ բաղադրութիւնը պէտք է հալել մի մաքուր կաթսայի մէջ ու դնելով կրակի վրայ՝ թողնել, որ լաւ կերպով հանգիստ եռգայ և սառչի, ապա թափել վերևում յիշած ամանի մէջ, որը եթէ դնէք մի անշարժ տեղում՝ հանգիստ դրութեան մէջ՝ բաղադրութիւնը բոլորովին կը սառչի և կը կազմուի հաւասար հաստութեան և բաւականին պինդ զանգուած։

Թանաք պատրաստելու համար առաջարկում ենք երկու տեսակ բաղադրութիւն.

1) 30 մսխ. ջուր և $2^3/_{10}$ մս. Փարիզիմանուշակագոյնների (violet de Paris).

2) Ալքօգօլ $22^1/_2$ մաս, ջուր $157^1/_2$ մաս, Փարիզի մանուշակ. ներկ $22^1/_2$ մաս։ Օրինակը գրվում է լաւ հարթ թղթի վրայ, որից թանաքը աւելի հեշտ է անցնում զանգուածին, իսկ տպագրութեան համար աւելի լաւ է համարվում հասարակ անհարթ թուղթ։

ԱՅԼԵՒ ԱՅԼՔ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Հարուն ալ Ռաշիդ կալիֆը սպանել տուաւ մի օր իր Ջաֆար Բարմէսիդ վէզիրին. բայց ժամանակ անցնելուց յետոյ ղղջաց իր անզգուշութեան վրայ: Նրա սիրտն անհանգիստ էր մանաւանդ և նրա համար որ ժողովուրդը շատ սիրով էր յիշում Բարմէսիդին:

Մի օր մի արաբացի բանաստեղծ, որ երբեմն բարիք էր վայելած վէզիրից, եկաւ նստաւ Հարունի ապարանքի դրան մօտ և սկսաւ երգել մի երգ, որ յօրինել էր Բարմէսիդին գովասանելու համար:

Այդ բանն իսկոյն յայտնեցին կալիֆին, որ նոյն միջոցին սեղան էր նստած. նա հրամայեց ներս կանչել բանաստեղծին և հարցրեց նրան, թէ «ինչպէս համարձակուեցար դու իմ դրան առջև այդպիսի երգ երգել»:

—Տէր իմ, պատասխանեց արաբացին. արքաների արքան շատ զօրեղ է. բայց կայ մի բան, որ նրանից էլ զօրեղ է:

—Եւ ինչ բան, ասաց ապշած կալիֆը:

—Բարերարութիւնը, պատասխանեց բանաստեղծը:

Կալիֆը զարմացաւ այդ խօսքից և վերցնելով մի ոսկէ բաժակ, որ դրած էր սեղանի վրայ, տուաւ բանաստեղծին: «Որովհետև դու այդպէս երախտագէտ ես, ասաց նրան, ուրեմն պէտք է որ այսուհետև դու ինձ ներքողես: Հարունը դարձաւ այժմ քո բարերարն և վայել է որ դու նրա անունը հնչեցնես Բարմէսիդի տեղ:»

Արաբացին առաւ բաժակը և աչքերը դէպի երկինք բարձրացնելով գոչեց. «Ո՜վ Բարմէսիդ, ինչպէս մոռանամ քեզ. ահա դարձեալ մի պարգև, որ ես քեզ եմ պարտական»։

Լա Հարփ։ Թարգմ. Ֆրանս. Փ. Վ.

Ծանօթ. Կալիֆ, արևելեան մի տիտղոս է, որ տրվում է Մահմետից յետոյ աշխարհական և հոգևորական իշխանութիւն վարող իսլամ պետերին։—Հարուն ալ Ռաշիդ կամ Ահրոն Ռաշիդ իշխում էր 786 թ. սկսեալ, Բաղդադում, որ Տիգրիս գետի վրայ գտնուող մի քաղաք է։—Ապարանք—պալատ, մեծ հոյակապ տուն։—Արքաների արքայ, շահին-շահ. այսպէս է կոչվում Պարսկաստանի թագաւորը։—Եբախտագէտ—երան եղած լաւութիւնը յիշող։—Ներբողել, կը նշանակէ գովել հռչակել։—Լա-Հարփ—ժը դարու մեծանուն Ֆրանսիացի գիտնական է։

ԶՈՒԱՐԾԱԼԻՔ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

8) Առաջ. Պ. Քալանթարեանց

Գիշերը ծառայ,
Ցերեկը աղայ.
Սա ինչ է, ասա։

9) Առաջ. Մ. Կ. Ալիխանեան

Գետ եմ, լիճ եմ, թէ քաղաք, —
Այդ գաղտնիք եմ, գլուխնաք,
Պոչս և գլուխս տարէք տուն,
Դառնամ երեք դերանուն։

10) Առաջ. Կ. Տէր – Աստուածատրեանց

Ո՛չ ցորեն եմ, ո՛չ գարի,
Որ հողագործն ինձ ցանի,
Առանց ջրի հունցած եմ,
Առանց ձեռքի կլորած եմ,

Ես անկրակ թխած եմ,
Թոնիր, ջաղաց տեսած չեմ՝
Ձեր բոլորիդ սիրածն եմ։

ՍՐԱՄԻՏ ԽՆԴԻՐ

Երեք հատ լուցկին միմիանց վրայ այնպէս պէտք է դարսել, որ եթէ երեք անգամ դանակով կտրենք, նրանք բաժանուեն 9 հաւասար մասերի։

Ի՞նչպէս կը լուծէք այս խնդիրը։

11) Առաջ. Ա. Բալասանեանց

Թուաբանական խնդիր. Ծառի վրայ նըստած էր իննը թռչուն. որսորդը՝ հրացան արձակելով՝ չորսին սպանեց. ծառի վրայ քանի թռչուն մնաց։

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Բժիշկը բժշկին բժշկում է։

ՆԱԽԸՆԹԱՑ № 2-Ի ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ. 4 Սարգի-ոստայն. 5) Լեզու. 6) Բահ, կահ, ջահ, մահ, շահ և գահ. 7) Կով, Ծով, Բով և Հով։ ՐԵԲՈՒՍՆԵՐ.—Վարդան, Վասակ, Եզնիկ, Աշոտ և Հաւուկ։

Մի խնդրի լուծումը. Զինուորները հետևեալ կերպով էին դասաւորուած.



Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ։

Дозволено цензурою. Тифлисъ, 25 февраля 1884 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 5.

ԱՂԲԻՒՐ

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Մանուկները և նրանց ընթերցանութիւնը:

«Նոր սերունդները ն ե ր կ ա յ ի հիւրերն են, իսկ ա պ ա-
գ ա յ ի տէրերը, ապագայի, որը նրանց համար ներկայ է դառ-
նում և որը ժառանգում են առաջիկայ հին սերունդներից։
Իւրաքանչիւր նոր սերունդը ապագայի սերմն է, մի նոր գաղա-
փար է, որը պէտք է փոխարինէ հին գաղափարին։ Հէնց սրա
վրայ է հիմնուած մարդկութեան ընթացքն ու յառաջադիմութիւ-
նը։ «Հին դինին չեն ածում նոր տկերի մէջ», ասաց Փրկիչը. և
էլի նա ասաց երեխաների մասին. «Դրանցն է Աստուծոյ արքայու-
թիւնը։»

Վ. Բէլինսկի։

Ամեն մի հասարակութեան վե-
րածնելութեան սերմերը պարու-
նակում են իրանց մէջ մանուկ-
ները. մանուկներ են իւրաքան-
չիւր ընտանիքի յոյսը, մանուկներ
են իւրաքանչիւր հասարակու-
թեան, իւրաքանչիւր ազգի ապա-
գայի սիւները, որոնց վրայ ժա-
մանակով հիմնուելու է ժողո-
վրդական յառաջադիմութիւնը։
Ռուսաց յայտնի երգիծաբան Շչէդ-
րինը անտարակոյս չափազանցու-
թեան չի հասնում, երբ իր «խիղճը
կորաւ» պատկերի մէջ միակ տեղը
խղճի համար գտնում է մանուկի
կուրծքը և այսպէս՝ խիղճը մա-
նուկի հետ միասին աճում է ու ա-
ճում, այն ինչ բոլոր դասակար-
գերը հեռացնում են նրան իրան-
ցից...

Այո՛, մանուկի կուրծքն է և մի-
միայն մանուկինը, ուր կարող է
ապաստան գտնել իւրաքանչիւր
ազնիւ զգացմունք, իւրաքանչիւր
պայծառ գաղափարի սերմը, որ
հետզհետէ մեծանալու է և զար-
գանալու։

Երջանիկ է այն ժողովուրդը,
այն հասարակութիւնը, որ ոչ մի
միջոց չի խնայում իր նոր սերունդը
դաստիարակելու համար — ա պ ա-
գ ա ն այդպիսի հասարակութեան
է պատկանում։ Մէկ-երկու դաս-
տիարակուած սերունդ և քայքայ-
ուող ժողովուրդը փրկուած է։

Մեր նպատակը չէ այս փոքրիկ
յօդուածում խօսիլ մանուկների
ընտանեկան և հասարակական
(ուսումնարանների) դաստիարա-
կութեան վրայ, որին գուցէ «Աղ-
բիւրը» մի ժամանակ վերադառ-
նայ։ Այստեղ մենք ուզում ենք
միայն կանգ առնել մանուկներին
զարգացնող միջոցներից գոնէ ա-

մենագօրեղներից մինի վրայ, այն է՝ մանկական ընթերցանութեան։

Մեր մէջ վերջին ժամանակները կարծես զգացուել է այդ պահանջը և ահա մօտ տաս տարի է ինչ սկսուել են փոքր առ փոքր լոյս տեսնել մանկական գրքեր, ամսագրեր... Եւ այդ համեմատաբար փոքր քանակութեան գրքերի մէջ որքան գրքեր կան, որոնց միակ վիճակը կրակ պէտք է լինէր . . .

Տալ մանուկներին ընթերցանութեան նիւթ այնքան հեշտ չէ, ինչպէս ոմանք կարող են կարծել և այդ դժուարութիւնը այնքան զգալի է, որ Ռուսսօն մինչև անգամ վնասակար էր համարում մանկական ընթերցանութիւնը և իր «Էմիլին» մինչև 12 տարեկան հասակը չէր ուզում անգամ գիրք ցոյց տալ։ Բնական զարգացման այն ծայրահեղ վարդապետը ընկաւ այդ տեսակ ծայրահեղութեան մէջ։ Թողնենք Ռուսսօին և իր վարդապետութիւնը և դիմենք մեր խնդրին։

Մանկական ընթերցանութեան նիւթը պէտք է համապատասխանի մանուկի բնական զարգացման։

Յօդուածիս Ճակատին մենք առաջ էինք բերել Բէլինսկու խօսքերը. «Իւրաքանչիւր նոր սերունդը ասպագայի սերմն է, մի նոր գաղափար է, որը պէտք է փոխարինէ հնին», «Հին գինին չեն ածում նոր տիկերի մէջ», բայց միւս կողմից աւելացնում է նա՝ «նորը խակական լինելու համար պէտք է ծագի հնից և դրա մէջն է պարունակվում դաստիարակութեան բուն նշանակութիւնը»։

Այն. ոչ մի նոր չի կարող առաջ եկած չլինել հնից—դա անհերքելի բնական ընթացք է, և դրան զանցառնելով մենք ոտնակոխ արած կը լինինք դաստիարակութեան հիմունքներից մէկը։

Ահա ինչու չպէտք է վակել մանուկների առաջ բուն ժողովրդական զրոյցները, առակները, որոնք արտայայտում են այդ ժողովրդի հայեացքները, կեանքը։

Այդ տեսակ ժողովրդական առակները զարգացնում են այն սերտ կապը, որ կայ մանուկների ներքին կեանքի մէջ և իր ժողովրդի մէջ. միմիայն այս ճանապարհով մանուկի զարգացումն ընթանում է իր բնական ճանապարհով։

Հասկանալի է, որ ժողովրդական զրոյցներին հետևում են պատմական պատկերները, որոնք անկասկած մանուկներին մատչելի ոճով պէտք է լինին։ Պատմական պատկերները, որոնց մէջ դուրս են բերուած պատմական անձնաւորութիւնները, և նրանց գործունէութիւնը միտեսակ կեանքի նախագիծ է դառնում պատանիների համար։

Մանուկների ընթերցանութեան նիւթը չպէտք է կրի նեղ բարոյական ուղղութիւն։ Մանուկներին բարոյականութիւն սովորեցնելու ձգտումը—արդէն փչացնում է մա-

նուկներին, ինչպէս նկատում է իրաւացի կերպով Հէրբարտը։ Բարոյականութիւնը չեն սովրեցնում, այլ զարգացնում են մանուկների մէջ։ Օրինակ՝ աշխատասիրութիւնը բարոյական զգացմունքների մի տեսակ հիմք է, բայց «Աշխատութեան սանդուխքը»-ների պէս յիմար գրքոյկներով չէ զարգանում մանուկների մէջ աշխատասիրութիւնը։ Ուզում էք դրդել մանուկներին դէպի աշխատասիրութիւն, ցոյցտուեցէք նրանց աշխատանքը գործողութեան մէջ իր հետևանքներով առանց ծածկելու մանուկների առաջ և այն հառաչանքները, որոնք յաճախ դուրս են թռչում աշխատողների կրծքից... փոյթ չէ. այդ հառաչանքները, աշխատողի չհասնելը ա՛նգամ ապահովուած վիճակին չեն նսեմացնի մանուկների սրտում յարգանքը, սէրը դէպի այն աշխատանքը, որ նկարագրուած էր կենդանի պատկերների մէջ։ Մի՛ կեղծէք մանուկների առաջ, ցո՛յց տուեցէք նրանց կեանքի և փշերը և վարդերը, միայն ասածների մէջ լինի ճշմարտութիւն։ Միայն պէտք է իմանալ արտայայտել ճշմարտութիւնը. մենք չենք ասում, որ կուրօրէն պէտք է նկարել կեանքը, որ նկարագրութեան մէջ չպէտք է պահպանուի յայտնի ձևը. գիտենք, որ կան բաներ, որոնք յայտնի կերպով ներգործում են մարդու զգացմունքների վրայ, որպիսին է «ամօթխածութեան յայտնի աստիճանը»։ Բայց խօսել մանուկների առաջ դիցուկ սիրոյ մասին, ի՞նչու պէտք է վախենանք մենք. միայն թէ խօսքներիս մէջ չլինին մութ տեղեր, որոնք հազար ու մի ենթադրութիւնների պատճառ կարող են դառնալ, միայն թէ՝ նկարագրուած սէրը լինի մաքուր, սուրբ . . .

Մեր կարծիքով մանկական գրքերը պէտք է հեռու լինին կրօնական ձգտումներից, որովհետև այդպիսիները գրվում են նախագծուած նպատակներով, որը արդէն գիրքը անպէտք է դարձնում՝ ձգտելով ուսուցանել բարոյականութիւն։

Բնական գիտութիւնների և տեղագրութեան հետ ծանօթանալու համար ամենալաւ միջոցը ճանապարհորդութեան ձևն է, բայց դա այնչափ դժուար է, որ շատ և շատ քչերին միայն կարող է յաջողուիլ։

Այսպէս՝ ծանօթացրէք մանուկներին ճշմարիտ, իսկական կեանքի հետ, ցոյց տուեցէք նրանց, որտեղ է իսկական կեանքը. մեծ քաղաքների բնակիչները թո՛ղ ծանօթանան գիւղացիների կեանքի հետ, տեսնեն թէ իրանցից ով է իսկապէս հոգով ստրուկը, ծանօթացրէք մանուկներին անցեալի և ներկայի հետ կենդանի պատկերների մէջ, ծանօթացրէք զանազան ոյժի և կամքի տէր մարդերի կեանքի հետ։

Այդ բոլորը կը յաջողուի միմիայն այն ժամանակ, երբ մանկական ընթերցանութեան նիւթը գրած

կը լինի պարզ, մանուկներին մատչելի լեզուով՝ մանկական գիրքը կենդանի և հետաքրքիր կը լինի, երբ հերոսները շինծու տիկիններ չեն լինի։

Պէտք է նոյնպէս աչքի առաջ ունենալ, որ մանուկներին սաստիկ գրգռող գրքերը յաճախ աւելի վնասակար են լինում, քան թէ թմրեցնող գրքերը։ Ամեն տեսակ գրգռումն արդէն խանգարում է մանուկի հոգու առողջ զարգացման ընթացքը։

Այս վերին աստիճանի համառօտ հայեացքի մէջ մենք ցոյց տուինք, թէ ինչ ճանապարհի վրայ պէտք է կանգնի մեր մանկական գրականութիւնը։ Կեղծաւորութիւնը և փարիսեցիութիւնը չպէտք է տիրապետի մանկական գրականութեան մէջ։ Նա պէտք է ներկայացնէ մանուկներին այն, ինչ որ եղել է, կայ կամ ինչ որ կարող է լինել միմիայն, աւելացնում ենք, ընտրութիւնով այնպիսի դէպքերի, որոնք ինքնըստինքեան զարգացնող, բարոյականացնող նշանակութիւն ունին։

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՅԵԱՅՔ

Բնագիտական առարկաների դասաւանդութեան մեր դպրոցներում և «ուսումնական զբօսանքների» իբրև նրան օժանդակող միջոցի վրայ։ (*)

«Զգայարար ընդունածը հարիւր անգամ աւելի հաստատ և հիմնաւոր է տպաւորվում, քան սովորածը»։

ԿԱՄԷՆՍԿԻ

Հեռու չէ այն ժամանակը, երբ ուսումնարանները մեզանում իրանց կոչմանը և բուն նպատակին չէին ծառայում. որ սրանք վոխանակ սանիկների միտքը, յիշողութիւնը սրելու, նրանցից զարգացած և առողջ ընդունակութեան և դատողութեան տէր մարդիկ ստեղծելու—բթացած, բարոյապէս մեռած և մարդկային ամեն մի զգացմունքներից և յիշողութիւնից զուրկ մի-մի անդամալուծներ էին պատրաստում հասարակութեան համար։

Ժողովուրդը չէր ճանաչում ուսումնարանի կարևորութիւնը, նը-

*) Զեռեղելով սոյն յօդուածը խմբագրութիւնս դիտաւորութիւն ունի վերադառնալու այն խնդրին՝ թէ ինչ մեծ դեր է խաղում բնագիտութեան դասաւանդութիւնը մանուկների թէ մտաւոր և թէ բարոյական զարգացման մէջ։

Խմբ.

ըա անհրաժեշտութիւնը. ուսուցիչը չէր հասկանում իր պարտաճանաչութիւնը՝ ծանր պաշտօնի վսեմութիւնը, և աշակերտը սարսափելով էր յիշում ուսումնարանի անունը։ Ի՞նչն էր այս բոլորի պատճառը։ Պատասխանը շատ պարզ է՝ մեր ուսումնարանների այն վատ ուղղութիւնը, կազմակերպութիւնը նրանց մէջ աւանդելիք առարկաների այն վատ սիստեմը, որ մինչև մօտ օրերս տիրում էր նրանց մէջ։ Եւ ճշմարիտ, ո՞վ չէ մեզանից այսօրուայ պէս յիշում այն տաժանելի չարչարանքները, որ մենք կրում էինք մեր տգէտ ուսուցիչների ձեռքին։ (Եթէ միայն չեմ մեղաչում դրանց այդ կոչումը տալով)։ Ո՞ւմ չէ ձանձրացրել, ո՞ւմ մատաղ սիրտը չէ մաշել արդեօք Ժամագրքի, Սաղմոսի, Զամչեան քերականութեան, Տրամաբանութեան, Նարեկի և Յիսու Որդու դժուարամարս տողերը, դարձուածքները։ Սակայն այսօր բախտաւոր ենք, որ այդ հին, սխօլաստիքական հոգով կրթուած խալֆաները փոխարինուեցին մեզանում մանկավարժ և փորձառու ուսուցիչներով, որոնց միջոցով և մեր դպրոցներն իրանց ներքին և արտաքին կազմակերպութիւնով մ ա ս ա մ բ նորանոր փոփոխութիւնների ենթարկուեցին։ Մասամբ եմ ասում, որովհետև դեռ կան մեզանում դպրոցներ, որոնք տգէտ, մանկավարժութեան հոտն անգամ չառած տիրացու — ուսուցիչների ձեռքը մատնուած լինելով՝ այսօր էլ միշտ յիշեալ դպրոցների տիպարն են ներկայացնում մեր աչքերի առաջ։ Այո՛, կան դեռ ևս մեզանում մանկավարժութեան փրկարար լոյսը չթափանցած դպրոցներ, որոնք, եթէ ոչ այսօր, գէթ վաղը մանկավարժութեան առաքեալների միջոցով գուցէ առաջինների կարգն անցնեն։ Թէպէտ և այս առաջիններն էլ՝ իրանց կազմակերպութիւնով, սահմանափակ դասընթացով՝ դեռ բոլորովին կատարելագործուած դպրոցներ չեն կարող համարուել մեզանում։

Պարզեմ միտքս։

Թէպէտև, ինչպէս վերն էլ յիշեցի, այսօրուայ մեր դպրոցներն իրանց ներքին և արտաքին կազմակերպութիւնով, իրանց դասընթացով, հների հետ համեմատած, մեծ առաւելութիւններ են ցոյց տալիս։ Թէպէտև առաջուայ մեր դպրոցների մէջ տիրող հին գրաբառ լեզուն փոխուած ենք տեսնում այսօր մանկան սրտին ու մտքին մօտ և դիւրըմբռնելի լեզուով. Թէպէտև ասում եմ, առաջուայ քերականութիւնների, ճարտասանութիւնների, տրամաբանութիւնների փոխարէն՝ այսօր երեխաներին իրանց մօտիկ և սիրելի առարկաների հետ ենք ծանօթացնում, նրանց վրայ խօսեցնում, բայց և այնպէս մենք դեռ ևս շատ հեռու ենք այդ առարկաները նրանց աւելի մօտից շօշափելու՝ դիտել տալու, աւելի հետաքրքիր, արդիւնաւէտ դարձնելու, կարճ՝ նրանց իրանց աշխարհում կրթելու մտքից։ Մանուկը

մեզանում, ուսումնարան մտած օրից, աւելի ևս խորթանում, աւելի անտարբերութիւնով է վերաբերվում դէպի իր աշխատանքը։ Նրան իր հօրական տան մէջ եղած ժամանակ գուցէ աւելի յաճախ էր պատահում հետաքրքրքրուել նրան շրջապատող այս կամ այն առարկաներով, քան այժմ մեր դպրոցներում։

Ասելիքս բնագիտական առարկաների դասատուութիւնների ձեւին պիտի վերաբերի, այն ձեւին՝ որով անցնում են այժմ շատ ուսուցիչներ մեր դպրոցներում կամ դպրանոցներում։

Ասէք, խնդրեմ, այժմեան մեր դպրոցներում կամ դպրանոցներում ուսումնաւարտ երիտասարդներից որն է արդեօք՝ ամենաշատը մի 20 տեսակ բոյսի, մի նոյնքան միջատի և դրանց կէսի չափ հանքային տեսակների հետ ծանօթ։ Եթէ դրանցից մէկին մի մեխակ ներկայացնելու լինենք, նրան լոկ «ծաղիկ» անունը չի տալ և նոյն անունով էլ չի մկրտիլ դա արդեօք բոլոր նրան ներկայացրած զանազան տեսակ ծաղիկներին։ Եթէ դրանցից մէկին ասոյլ ներկայացնելու լինենք՝ նրան հասարակ «խոտ» կամ «բոյս» անունը չի տալ, սոյն կերպով էլ չի վարուիլ և միջատների կամ հանքային տեսակների հետ։ Ուրեմն ինչպէս տեսնում էք, դրանք դեռ նրանց առաջ դրած բոյսերի լոկ անունը տալ չգիտեն, ուր մնաց որ եթէ դրանցից՝ նրանց որ դասակարգին, ընտանիքին կամ ցեղին պատկանելը որոշել պահանջէինք։ Այժմ ինքն ըստ ինքեան հարց է ծագում թէ՝ ով է սրանում մեղաւորը։ Ի հարկէ, մեր բնագէտ ուսուցիչները, կը պատասխանեմ։

Ահա թէ ինչու։

Ա. Մեր բնագէտ ուսուցիչներն նրանց ստանձնած առարկաների դասախօսութեան համար հազիւ հազ հասարակ աչքով նկատուելիք ինֆուզորեաներ են ընտրում, կամ թէ չէ՝ այն տեսակ երկրորդական տեղ բռնող, հաղուագիւտ միջատների կամ կենդանիների մասին են պատմում, որոնց հետ աշակերտը ոչ թէ դասատանը կամ դասատանից դուրս կարող է հանդիպել, այլ նոյնիսկ իր ամբողջ կեանքում ևս գուցէ բախտ չունենայ նրանց հետ ծանօթանալու (*), և

*) Ասածներս հաստատելու համար՝ աւելորդ չեմ համարում հէնց այժմ իսկ առաջս դրած մի յայտնի դպրանոցի երրորդ դասատան մէջ սորուած իմ ձեռագիր տետրից մի քանի որդերի կամ խխունջների անունները յիշելու, որից ընթերցողն էլ կը համոզուի ասածներս ճշդութեան մէջ։ Օր. Տրիխենայ, Օսարեայ՝ մի ծածկոցանի խխունջ, Հիդրայ, Աքգինեայ, Պոլիպ կամ Բուստ Լայլն Լայլն։ Ճշմարիտն եմ ասում, մինչև օրս դեռ սրանցից և ոչ մէկի երեսը տեսնելու բախտ չեմ ունեցել, գուցէ այսուհետև ևս չունենամ։

Գ. Խ.

Բ. Մեր բնագէտ ուսուցիչների դասաւորութիւնների մէջ եթէ մի մեծ՝ աչքի ընկնող պակասութիւն էլ կայ, այդ այն է, որ դրանք լրի մասին շատ անգամ վերացական հասկացողութիւն են տալիս իրանց սանիկներին կամ միմիայն կաւիճով գրատախտակի վրայ նրա ձևը գծագրում և կամ թէ չէ՝ նրա չոր ու ցամաք նկարը՝ պատկերը ցոյց տալով բաւականանում։

Այժմ մի քանի խօսքով բացատրեմ վերոյիշեալ երկու սիստեմների վատ ուղղութիւնը։

Ո՞վ կարող է արդեօք մեզանից հակառակուել և չընդունել մանկավարժութեան այն յայտնի սկզբունքը՝ որ դիտողական վարժութիւնները տարրական դասաւորութեան մէջ առաջին տեղը բռնելով, են նոյնպէս և կարևորագոյնը՝ որ մարդս չի կարող մտածել առանց դիտելու, այսինքն՝ նախ—իրը, յետոյ—խօսքը։ Ուր չկայ իր, այնտեղ չկայ և դիտողութիւն, ուր չկայ դիտողութիւն, այնտեղ չկայ և մտածողութիւն, հետևապէս և գաղափար։ Ասել եմ ուզում. որպէս զի մարդս մի առարկայի վրայ գաղափար ստանայ, պէտք է որ նախ նա նրան տեսնէ, դիտէ, որ և ապա նա իր տեսածի, դիտածի մասին մի գաղափար կազմելով՝ բառերով մարմնացնել կարողանայ։ «Խօսել առանց տեսնելու, ասում է սրա համար մի գերմանացի մանկավարժ, միևնոյնն է թէ դատարկ յարդ կասել։»

Այժմ, յիշեալ տողերից յետոյ, մի թէ պարզ հասկանալի չպիտի լինի, որ մեր բնագէտ ուսուցիչները իրանց Ա. սկզբունքով բոլորովին հակառակ են վարվում մանկավարժութեան յայտնի սկզբունքի դէմ։ Ինչու՞ չսկսել և չվերջացնել երեխայի նոյնիսկ շուրջը, մօտ և ծանօթ եղող առարկաներից, չբացատրել նրանց մեզ տուած օգուտները, վնասները, նրանց կենցաղավարութիւնը, բեղմնաւորութիւնը և սնունդը, կարճ՝ չսիրել տալ մանուկներին այն առարկաները, որոնց հետ և ուսումնարում և ուսումնարանից դուրս գործ պիտի ունենան նրանք և որոնց պիտի պատահին նրանք իրանց ամեն մի քայլափոխում, քան ընտրել այնպիսի մի՛ջատներ կամ կենդանիներ, որոնք իրանց չնչին կազմակերպութիւնով կամ հազուագիւտ՝ հեռու երկրներում գտնուելովը ոչինչ նշանակութիւն չեն կարող ունենալ առ այժմ սանիկի կրթութեան գործում։ «Մի՛ ուսուցանէք ոչինչ, որ ուսանողների համար դեռ ոչինչ նշանակութիւն չունի այն ժամանակ, երբ նա սովորում է, կամ ապագայումն էլ ոչինչ նշանակութիւն չի ունենալու», շատ իրաւացի կերպով նկատում է այս առիթով Դիստերվէգը։

Գամ այժմ Բ. սկզբունքի վնասակար կողմերը բացատրելու։

Դրա վնասակարութիւնը, ինչպէս և վերն էլ յիշեցի, դասախօսութեան նիւթ եղող առարկաների մասին տուած վերաց-

կան գաղափարների կամ նրանց լոկ պատկերները ցոյց տալու մէջն է կայանում:

ա. Բացատրեմ թէ՝ ինչ վնասակար հետևանքներ է յառաջ բերում այս սիստեմը սանիկի մէջ:

բ. Թէ՝ ինչից դրդուած են նրանք այդպէս վարվում, և գ. Թէ՝ ինչ միջոցների պէտք է դիմեն այս դէպքում մեր ուսուցիչները:

Փոքր ինչ վերև, դասատուութիւնների երկու վատ սիստեմաներից առաջնի մասին խօսելիս ասացի, որ առանց դիտողութեան չկայ ոչինչ գաղափար, իսկ առանց գաղափարի—ոչինչ մտածողութիւն. իսկ այժմ կ՚աւելացնեմ որ ո՛ւր չկայ զգայարանքների դիտողութիւն, ո՛ւր զգայարանքները մասնակից չեն լինում դաստիարակութեան գործին, այնտեղ և մտածողութիւնը չի ունենալ ո՛չ հաստատ սկիզբ, ո՛չ արմատ և ո՛չ էլ հիմք: Յայտնի է, որ սանիկի միտքը կը վարժուի, կը սրուի և առարկաների մասին որոշ գաղափար և օգտաւէտ տեղեկութիւններ կը ստանայ ոչ այլ կերպով, եթէ ո՛չ՝ առարկան դիտելով ու քննելով: «Ինչ որ չի անցնում զգայարանքներով, նա առհասարակ չի մտնում և հոգու մէջ», ասում է մանկավարժական առածը: Իսկ այս նկատմամբ ահա՛ թէ Դիստերվէգը ևս ինչ է աւելացնում. «Մարդս իրերի էութեան վրայ կենդանի հայեացք է ստանում մ ի մ ի ա յ ն դիտողութիւնով. մ ի ա յ ն նրանով է կարելի յառաջ ածել ճշմարիտ ուսման սէր և ճշմարիտ կրթութիւն: Ուստի և միայն այն ուսուցիչն է լ ա ւ տարրական ուսուցիչ, որի խղճմտանքը չի հանգստանում, մինչև որ ինքն իրի հետ չի ծանօթանում դիտողապէս, այսինքն դիտելով ու քննելով: Մի այսպիսի ուսուցչի հարկաւոր չէ զգուշացնել, որ դասատուութիւնը չպիտի լինի վերացական, որովհետև նրա մտածութիւնն էլ չէ վերացական և իր սեպհական փորձը դիտելով իրի հետ ծանօթանալը—նրան տալիս է մի կշիռ, որով նա կարող է կշռել ու չափել թէ՝ ինչն է պատշաճում ժողովրդական դպրոցին և ինչը՝ ո՛չ: Նա իր բոլոր ուժովը ճգնում է իր դպրոցի մէջ յառաջ բերել միևնոյնը: Դ ր ա մ է ջ ն է կ ա յ ա ն ո ւ մ տ ա ր ր ա կ ա ն ո ւ ս մ ա ն բ ո լ ո ր գ ա ղ տ ն ի ք ը», աւելացնում է վերջում Դիստերվէգը:

Իսկ դրան հակառակ՝ Ֆօգէլին հետևող—չոր ու ցամաք պատկերներին դիմող բնագէտ ուսուցիչներին էլ այս կ՚ասեմ՝ որ պատկերները չեն կարող իբրև սկզբնական դիտողութեան նիւթ ծառայել: Նրանք իրի ն շ ա ն ը, ս տ ո ւ ե ր ը, կամ այսպէս ասած՝ մ ա կ ա ր դ ա կ ն են միայն: Մանուկներին նկարներով բնագիտութիւն սովորեցնելու վատ ուղղութեան և նրանից յառաջացած վատ հետևանքի մասին ՚ի դէպ եմ համարում այստեղ մի ռուս մանկավարժի յիշատակութեան արժանի խօսքերը ևս յիշելու. «Երեխաներին չպէտք է նկարներով սովորե-

ցնել կենդանիների, միջատների (և բոյսերի կ'աւելացնեմ ես) անունները կամ պատմութիւնը։ Երեխայի գլուխը բնութիւնը պէտք է լինի և ոչ թէ նկարները։ Ա՛յն, ինչ որ երեխան արդէն տեսել է՝ աւելորդ չէր լինի, եթէ նոյնը և նկարի վրայ ցոյց տայիք։ Սակայն ցաւելով պէտք է խոստովանել, որ մեզանում շատ մայրեր իրանց երեխաներին շատ անգամ նկարները առաջը թափելով են խաբով անում, որով և հեռացնում են նրանց իրական աշխարհից։ Այսպիսի երեխաներն ապագայում այն բնագէտների տիպարը կը ներկայացնեն, որոնք արտաքուստ ցոյց են տալիս թէ շատ բան գիտեն, բայց հաստատ ոչինչ չգիտեն»։ Այս տողերից այժմ կարծեմ հասկանալի՞ պիտի լինի մեր մի քանի անիրաւ ուսուցիչների և այն վատ վարմունքը, որ շատ ուսումնարաններում բնագիտական քարտէզներով զարդարում են մեծ ու փոքր պատրաստականների պատերը։

Այժմ դանք այն խնդրին թէ՝ ինչից դրդուած են մեր բնագէտ ուսուցիչները իրանց սանիկների հետ այսպէս վարվում։ Սրա պատասխանը շատ պարզ է՝ իրանց ձեռի տակ բնութեան երեք թագաւորութեան, այն է՝ բոյսերի, կենդանիների և հանքային թագաւորութիւնների պատկանող նոյն իսկ բնական, կամ այսպէս ասած, իսկական ժողովածուները չունենալուց, որոնց կազմելը մեր չիշեալ գործարանական և անգործարանական թագաւորութիւններով հարուստ Կոմկասը ինչպէս մեծ առատութիւն, այնպէս և մեծ դիւրութիւն է խոստանում։ Իսկ դրանց ունենալովն էլ հասկանալի է թէ որքան կը դիւրանայ ուսուցչի գործը, ինչ օգուտ կը քաղի սանիկը և հետևապէս, որ ամենից գլխաւորն է, ինքն ըստ ինքեան կը վերանան մեր ուսումնարաններից միմիայն ենթադրութիւններով և վերացական կերպով դասատուութիւնների այն ձևը, որը մինչև օրս տիրել է և դուցէ այսուհետև ևս տիրէ մեր դպրոցներում։ Ի դէպ եմ համարում այստեղ ակամայից յիշել և այն, որ չիշեալ ժողովածուների բացակայութիւնը, (բացի հանքային մի քանի տեսակներից) խիստ աչքի էր ընկնում և մեր Ա. Ը. Ուսուցչական ժողովի համար Պ. Մ. Սալամբէկեանից կազմուած օրինակելի դպրոցում։ Այդ տեղ մտնող ուսուցիչների ուշադրութիւնն իր վրայ էր դարձնում դրան մուտքի մօտ դրած բուսական թագաւորութիւնը պարունակող մի բնագիտական ատլաս, (չեմ յիշում ում նուիրած և ում հեղինակութիւնն էր այն), որի իւրաքանչիւր մի բոյսը իր բնական մեծութիւնով և գոյնով շատ կենդանի և մօտ նմանողութիւնն էր տալիս իր բնականին։

Պ. Սալամբէկեանը չիշեալ ատլասի վերաբերմամբ յայտնած հիացմունքի և հաղուագիւտ լինելուն հետ յիշեցնում էր հիւրերին ևս նրա թանկ արժէքը. իսկ ես այստեղ կը նկատեմ պ. Սալամ-

բէկեանին, որ եթէ մի լրի դիցուկ հէնց մի բոյսի կամ միջատի նկարը երբ մեզ հիացմունք է պատճառում և թանկ արժէ, ապա որքան թանկ պիտի արժենայ մեզ համար հէնց նոյնիսկ նրանց բնականը, նրանց իսկականը և վերջապէս նրանցից կազմած ժողովածուները։ Իսկ այս ժողովածուները կազմելու մասին ասելիքով էլ պատասխանած կը լինիմ, քիչ առաջ յիշած, գ. հարցիս, թէ ինչ միջոցների պէտք է դիմեն մեր ուսուցիչները։ Բայց նախ քան ուղղակի այդ հարցին պատասխանելս, ասեմ մի քանի խօսք դրա առիթով։

Գաւառական վոքրիկ քաղաքների և գիւղական ուսուցիչներից շատերը գանգատաւոր են, որ իրանց ուսումնարաններին չքաւորութիւնը մեծ արգելք է ներկայացնում իրանց ուսումնարաններում առարկայախօսութեան կամ բնագիտութեան դասերի յաջող կերպով յառաջ ընթանալու գործում, պատճառ բերելով ուսումնարանի սուղ միջոցը՝ որ արգելում է իրանց բնագիտական քարտէզներ բերելու։ Եւ այս դէպքում սրանք երջանիկ են համարում այն ուսուցիչներին, որոնք առաջնակարգ քաղաքների բարեկարգուած ուսումնարաններում գործելով, հետևապէս և ոչինչ դժուարութիւն էլ չեն կրում այդ կողմից։ Ցիշեալ գիւղական ուսուցիչները չարաչար սխալվում են այդ կարծիքը վերջիններիս վրայ տանելով, կը նկատեմ ես։ Նրանք մոռանում են, որ վերջիններս իրանց սահմանափակ շրջանում լինելով և բնական միջատները կամ բոյսերը ձեռքները չընկնելով, ստիպուած են լինում միմիայն նրանց նկարներով բաւականանալ և բաւականացնել իրանց սանիկներին, այն ինչ իրանք—գիւղական ուսուցիչները ոչինչ նկարների ակնկալութիւն չպիտի ունենան՝ քանի որ բնութիւնն ինքը այդ կենդանի միջատները և բոյսերը մեծ առատութիւնով թափել է իրանց առաջ և իրանք իւրաքանչիւր մի քայլափոխում նրանց պատահելով, առանց դժուարութեան, մէկիկ վոխարէն նրանց հազարաւոր տեսակները կարող են ձեռք բերել։

Դառնամ բուն խնդրին։

Միակ միջոցը, որին պէտք է դիմեն այս դէպքում մեր ուսուցիչները՝ դա յիշեալ ժողովածուներն են, որոնց կարող են կազմել իրանք աշակերտների հետ նստած կրթողական կամ, այսպէս ասած, «ուսումնական զբօսանքների» ժամանակ։ Բայց այս տողովս էլ թող յարգելի ընթերցողն այդպէս միակողմանի չհասկանայ յիշեալ զբօսանքների նպատակը. այս ասում եմ, որովհետև ուսումնական զբօսանքները մեզանում իբրև նոր բան դժուարութիւնով պիտի մարմնանան մեր մէջ, և մինչև օրս, եթէ չեմ սխալվում, ոչ մի դպրոցի վարչութիւն օրինակ չէ ցոյց տուել մեզ այդ ուսումնական—դաստիարակական

տարրը մեր մէջ զարգանալում (*) եթէ միայն դեռ չեն գտնուել դրա դէմ, ոչ միայն հասարակութիւնից, հոգաբարձուներից, այլ նոյնիսկ մեր ուսուցիչներից հակառակորդներ, որոնք այդ զբօսանքների վրայ նայել են լոկ ժամանակ վատնելու տեսակէտից, այն ինչ հաստատ կարելի է պնդել, որ մանուկներն այդպիսի մի զբօսանքից այն են սովորում, որը չէին կարող սովորել դասատանը քանի մի օրուայ ընթացքում: Նպատակիցս դուրս չէր լինի կարծեմ, եթէ այստեղ ուսումնական զբօսանքները կատարելու ձևը և նրա՝ սանիկների թէ մտաւոր և թէ ֆիզիքական ուժերի վրայ ունեցած օգուտները ևս կարճօրէն յիշէի:

Օրուայ ժամերը բարեխիղճ ուսուցիչը որոշ դասերի բաժանած լինելով, շատ սխալուած կը լինէր, եթէ բնագիտական առարկաների վերաբերմամբ ևս յիշեալ, կարճ, չափած բոպէների ընթացքում իր սանիկներին տուած տեղեկութիւններով բաւականանար, որովհետև ուսուցիչը դասատանը խօսած դասերով և ցոյց տուած օրինակներով դասախօսութեանը նիւթ եղող առարկայի միմիայն պատճէնը, ձևը կամ նրա յատկութիւնը ցոյց տուած կը լինի, իսկ գալով առարկայի բնական դիրքը, ուր և ինչպիսի հանգամանքներում գտնուելու, դրա զանազան տեսակների, բաժանմունքների, նրանց կենցաղավարութեան կամ սննդառութեան մասին ասելիքին՝ որպէս զի նրանք լոկ, միմիայն վերացական և շուտանցուկ բառեր չլինին՝ ուսուցիչը պարտաւոր է իր սանիկներին շաբաթական 2—3 անգամ քաղաքից կամ գիւղից դուրս տանել թէ զբօսնելու և թէ դասատան մէջ անցածներն այստեղ ընդարձակօրէն և որոշ կերպով դիտել տալու նպատակով: Այս դէպքում ուսուցչի հմտութիւնը նրանում պիտի կայանայ, որ կարելի եղածի չափ ինքը քիչ խօսի՝ աշակերտներին դիտելը և դիտել տալը սովորութիւն դարձնել աշխատի: Այս կէտի վերաբերմամբ ահա թէ Հ. Սպենսէրը ևս ինչ է ասում. «Պատմել և ցոյց տալ այս կամ այն առարկան չի սովորեցնում նրան (երեխային) քննել կամ զննել այս ինչ կամ այն ինչ առարկան, այլ մի գործիք, որը ուրիշի զննածներն է իր մէջ ընդունում:»

*) Միմիայն անցեալ տարի «Վարժարանի» երկրորդ տարուայ ա. Համարում կարդացի. որ «այս ամարային արձակուրդի ժամանակ Ս. Պետերբուրդում մանկավարժ Վինադրադովի առաջնորդութիւնով և ղեկավարութիւնով երեխաների համար կրթողական զբօսանքներ են կազմել. և դա մեծ յաջողութիւն ունենալուց զատ, այլ և մեծ հետաքրքրութիւն է զարթեցրել երեխաների մէջ»: Այժմ ապասելու է, որ մենք էլ այդ զբօսանքներից կատարենք, որովհետև Ս. Պետերբուրդից մեզ օրինակ են ցոյց տալիս:

Գ. Խ.

Աշխատելու է, որ աշակերտները այստեղ իրանք նոր-նոր գիւտեր անեն. օրինակի համար՝ զանազան գոյնի, կարծրութեան քարեր ժողովեն, տեսակ-տեսակ ծաղիկներ հաւաքեն և գոյզգոյն թիթեռներ կամ միջատներ որսան և նրանցից իւրաքանչիւրի ինչ-ինչ հանգամանքներում, տեղում կամ դիրքում գտնուիլն ուշադրութեան առնուին։ Դրանց ամեն մի օրինակը ուսուցչին ներկայացնելիս նոյն իսկ ըոպէին ընդհանուրի ներկայութիւնով պէտք է քննութեան առնի ուսուցիչը։ Այս դէպքում ևս աւելորդ չեմ համարում այս էլ յիշելու, որ աշխատելու է իւրաքանչիւր մի քննուելիք իրի մասին նախ աշակերտներին խօսեցնել, նրանց դրա մասին ունեցած տեղեկութիւնները իմանալ և երբ նրանք այդ կը վերջացնեն՝ ապա, եթէ նրանց ասածների մէջ մի թիւր կարծիք, սխալ հասկացողութիւն, կամ թերութիւն է նկատում ուսուցիչը՝ պէտք է իր կողմից ուղղի։ Ահա այս ձևով վարուելով՝ ըմբռնած կը լինինք այն վսեմ խօսքերի նշանակութիւնը, որ ասում է. «Բ ն ո ւ թ ի ւ ն ը պ է տ ք է ո ւ ս ո ւ մ ն ա ս ի ր ե լ բ ն ո ւ թ ե ա ն մ է ջ (*)։»

*) Զարմանալի է թէ՝ պ. Վ. Շահվերդեանը ևս ինչպէս մոռացութեան է տուել իր «Նկատողական Ուսման» մէջ այս ուշադրութեան արժանի կէտը և խօսք անգամ չի յիշում այս զբօսանքների մասին։ Պարոնը Բուսական և հանքային թագաւորութիւնների մասին ևս ոչինչ չի խօսում, իսկ միջատների մասին՝ մի քանի խօսք միայն։

Գ. Խ.

Գալով ուսումնական զբօսանքների սանիկի ֆիզիքական և մտաւոր ոյժի վրայ ունեցած օգտի մասին ասելիքիս, առաջնի վերաբերմամբ ունեցած օգտի մասին խօսք անգամ աւելորդ եմ համարում, քանի որ ամենքին էլ քաջ յայտնի է թէ՝ ժամերով ապականուած օդի մէջ նստած սանիկի թմրած զգայարանքների վրայ ինչ կազդուրիչ ազդեցութիւն կարող է ունենալ թարմ և առողջարար մարգագետնի կամ դաշտի ու անտառի օդը։ Իսկ մըտաւորականին վերաբերեալ նրա օգուտները բազմակողմանի են։

Աշակերտները զբօսանքի դուրս գալով բացի այն, որ նրանք, ինչպէս վերն էլ յիշեցի, բոյսերի և միջատների հետ մօտից կը ծանօթանան՝ նրանք առիթ կ'ունենան և երկրաբանութիւնը ևս ուշադրութեան առնելու, թէ ինչպէս է կազմակերպուած և ինչ տեսակ շերտերից է բաղկացած երկիրը և նրա կեղևը, ինչ-ինչ մետաղներ և հանքեր է պարունակում նա իր մէջ, ինչ տեսակ հողեր են լինում, ո՛ր տեսակ հողին յատուկ է այս ինչ բոյսը, ո՛ր տեսակ հողերն աւելի յարմար են երկրագործութեան, այգեպանութեան, կամ անտառապահութեան համար և այլն և այլն։

Ուսումնական զբօսանքները քիչ օգուտ չեն կարող բերել աշխարհագրութեան և հայրենագիտութեան դասերին։ Սանիկները դաշտը դուրս գալով որոշ հասկացողութիւն կը կազմեն աշխարհիս

չորս կողմերի մասին։ Այստեղ պարզ և աւելի դիւրին կերպով կարելի է հասկացնել նրանց թէ՝ ինչին ենք ասում հորիզոն։ Գիւղի կամ քաղաքի ո՛ր կողմին է գտնվում այս ինչ կամ այն ինչ ուշադրութեան արժանի հիմնարկութիւնը, անտառը, գործարանը, կամ ինչ ընթացքներ ունի գիւղի միջով հոսող գետը։ Ո՛ր անտառի, դաշտի միջով է հոսում նա և ո՛ր-տեղ ինչ պտոյտներ անում։ Պատահած դէպքում երկնային զանազան երևոյթների մասին ևս կարելի է նրանց հասկացողութիւն տալ։

Այդ զբօսանքներն օժանդակում են նաև երգեցողութեան։ Ո՞վ կը հակառակուի, որ մաքուր օդի մէջ երգելով մեծ զուարճութիւն չեն զգում մանուկերը և որը առողջապահական կէտից նայելով մեծ օգուտ է տալիս նրանց կրծքին, թոքերին և ձայն արձակելու զգայարանքին։

Այդ զբօսանքներն առատ նիւթ կարող են տալ սանիկների դպրոցական շարադրութիւններին ևս, թէ ճանապարհորդութիւնների ժամանակ ինչ անցքեր տեղի ունեցան, ինչ խոչնդոտների հանդիպեցին, ինչ գիւղեր տեսան, նրանց բնակիչների թիւը, պարապմունքը, սովորութիւնները գրի պէտք է անցկացնուին։ Լաւ կը լինէր՝ եթէ այսպիսի զբօսանքներին մասնակցէին մի քանի առարկաների ուսուցիչներ, որովհետև մի ուսուցչի ոյժից վեր կը լինէր բացատրել սանիկներին ճանապարհին պատահած բոլոր երևոյթներն ու յիշատակները։

Այսպէս ուրեմն ուսումնական զբօսանքներն ունին իրանց ակընյայտնի օգուտները և կապը ո՛չ թէ միայն մի, այլ դասատան մէջ աւանդելիք բոլոր առարկաների հետ. ուրեմն էլ թեթև աչքով չպէտք է նայեն դրա վրայ իրանց ուսումնական ձեւացնող մեր բարեկամները և այդ զբօսանքները զուր՝ ժամանակի կորուստ էլ չպէտք համարուին նրանց կոմից. այլ ընդհակառակը՝ աշխատելու է աւելի լրջօրէն վերաբերուիլ դէպի այդ խնդիրը, և կարելի եղածին չափ շուտով մարմնացնելու է դրան մեր դպրոցներում։

ԳՐ. ԽՕՋԱՄԻՐԵԱՆ։

ԿԱՄՔԻ ՈՅԺԸ

(ԱՌԱՔԵԼ ԲԱՀԱԹՐԵԱՆՑԻ ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ) [1]

—Եթէ չընդունեն առաջարկութիւնս, ոտով կը գնամ, վերջապէս կ՝ապացուցանեմ, որ այդ բոլորը մեր խաւարասէրների և օտարամոլների ինտրիգաներն են, նրանց կոյր փառասիրութեան արտադրութիւնն է։ Ես Առաքելը չեմ լինիլ թէ չանեմ։

—Բայց ինչո՞վ կարող ես ապացուցանել, ոչ պակաս առաջինից

[1]) Արդէն մի տարի է անցել այն օրից, երբ ստացանք Ա. Բահաթրեանի գոյժը։

վրդոված՝ հարցնում էր միւսը։

—Ի հարկէ ոչ լոկ խօսքերով, այլ գործով. Թող հարցաքննեն մեզ, Թող ցոյց տան Թէ ճշմարիտ այդ մարդիկ ազգին և եկեղեցուն դաւաճանողներ են, Թէ... Թէ... վերջին խօսքերը սաստիկ վրդովմունքից չկարողանալով արտասանել սկսեց հեկեկալ։ Հէնց այդ րոպէին էլ զանգակը տուին և աշակերտները հինգ վայրկեան դեռ չանցած արդէն իրանց տեղերում նստած էին։

Այդ այն ժամանակն էր, ընթերցող, երբ մի անձնուէր և շատ լաւ կազմակերպուած ուսուցչական խումբ (պ. պ. Շանշեան, Գ. Մուրադեան և ն.) Ղարաբաղում՝ Շուշում ամենայն եռանդով աշխատում էր այդ երկրի մատաղ սերնդի մտաւոր բերրի անդաստանը ցանել, բայց հազար ու մի տեսակ անձինք խոչնդոտն էին լինում և ամեն հնարք գործ դընում արգելք լինել այդ խմբի ազնիւ գործունէութեանը։

Աշակերտները՝ որոնք արդէն հասկացել էին իրանց դաստիարակներին՝ արձակ սկսել էին բողոքել իրանց ծնողների, համաքաղաքացիների դէմ և խորհում էին դարման գտնել քաղաքում ծագած երկառակութեան առաջն առնելու։ Ահա հէնց այդ դասամիջոցումն էլ այդ մասին էին խօսում։

Այդ դասին մեր հերոսը մի փառաւոր զէրօ ստացաւ. պատճառ, չկամենալով կտրել իր մտածութեան Թելը այդ խնդրի առիթով՝ ուսուցչի հարցին ուղղակի պատասխանեց՝ «չեմ պատրաստել դասս»։

Գիշերուայ ժամը տասն էր սառը քամին վրզվրզում էր, ձիւնը քուլայ-քուլայ Թափվում։ Մեր «Ես Առաքելը չեմ, որ չանեմ»ը հաստատ քայլերով գնում էր։ Ամբողջ մարմնով նա դողում էր մասամբ ցրտից, մասամբ սաստիկ յուզմունքից։ Վերջապէս նա կանգ առաւ մի դրան առջև և սկսեց բաղխել։ Մի քանի րոպէից յետոյ դուռը բացեց հէնց այն պարոնը, որ նոյն օրը նրան զէրօ էր նշանակել և հարցրեց.

—Բահաթրեանց, թնչ կայ, այս ժամանակ էս ցրտով, էդպէս բարակ հագնուած, որտեղից ես գալիս։

—Մտնենք, դեռ ցրտի և բարակ հագնուած լինելու մասին խօսելու ժամանակը չէ։

Սենեակը մտնելով, տան-տէրը շարունակեց. — Գիտես, Բահաթրեանց, քո այսօրուայ վարմունքը ես չեմ մոռանալ, ես համոզուած եմ, որ դասդ գիտէիր, բայց քո այնպիսի պատասխանը, համաձայնուիր . . .

—Էհ, թնչիս է պէտք բերան անել, Թուլթակի պէս կրկնել, Թէ Վասակը դաւաճան էր, Վարդանը հայրենիքի համար արիւն Թափեց, քանի որ այդ իմ սրտից չպէտք է դուրս գայ... Բայց Թողնենք այդ, պարոն ուսուցիչ։ Մենք՝ բոլոր աշակերտներս երդուել ենք մինչև անգամ եթէ մեր տներից էլ մեզ արտաքսեն՝ դարձեալ ձեր փէշից բաց չԹողնել։ Ասացէք, օգնեցէք մեզ ինչ զէնքով կարող ենք ջարդու-

Թէև անցեալ տարի խոստացանք տալ հանդուցեալի կենսագրութիւնը, բայց պատկերը ուշ ստանալով արտասահմանից, յարմար համարեցինք այսօր նրա տարեդարձին տպագրել։

փշուը անել մեր տգէտ ամբոխի փառասէր և օտարամոլ ներկայացուցիչներին։

Ուսուցիչը որ մնացել էր շուարուած և լուռ կանգնած անընդհատ ծխում էր իր հաստ գլանիկը։

—Մենք արդէն վճռել ենք, շարունակեց Առաքելը, և յուսով ենք, որ թէ տեսուչը և թէ հոգաբարձունները կը համաձայնեն, որ մեզանից մի երկուսին ուղարկէք Էջմիածին Թող մեզ հարց ու փորձ անեն, քննեն, արդեօք ձեր ջանքերը 'ի զուր են կորել, թէ բան էք սովորացրել։ Թող որտեղի դպրանոցի, թէկուզ հէնց Ներսիսեան ուսումնարանի աշակերտներից բերեն, տեսնենք ո՞վ ում կը կարի։

Ուսուցիչը երկար լռութիւնից յետոյ համաձայնութեան նշան տուեց և խոստացաւ այդ բանը անպատճառ գլուխ բերել և ուղարկել հէնց մէկը իրան՝ Բահաթրեանին, իսկ միւսը նրա ընկերակից Խ. Խաչատուրեանին [1]։

Հինգ օրից յետոյ մեր Առաքելը և Խ. Խ. «մնաք բարով» էին ասում ընկերներին։ Սայլակի գանգակը ուսումնարանի առաջ քաղցը զօղանջում էր. սայլակը նստելիս Առաքելը երեսին խաչակնքեց և կրկին յետ շուռ եկաւ դէպի ընկերները, քաջ եղէք, թէ ես Առաքելն եմ սէրս չեմ վերադառնալ։

Այդ տարին ձմեռը շատ սաստիկ էր, իսկ Ճանապարհին խեղճ Առաքելը չունենալով օրինաւոր տաք շոր, ինչ ասել կուզէ որ մինչև տեղ հասնելը դողում, սարսռում պէտք է լինէր, միայն քաղցը յոյսը պարզ երես վերադառնալու մտածութիւններով զբաղուած լինելը զգալ չէին տալիս նրան բորանն ու սառնամանիքը։ Բայց Վանայ ծովի եզերքում Զիբուխլուի մօտ կատաղի փոթորիկն ու սաստիկ ցուրտը սթափեցրին մեր պատանեակ Ճանապարհորդին և նրա քաղցը երևակայութիւնը խանգարեցին։ Կարծէք այդ նուիրական վայրերն էլ էին նրան դիմադրում նրա հաստատակամքի տէր լինելու մասին կասկածում։ Ուսուցչական խմբի պաշտպան հոգաբարձուն՝ որ ուղեկցում էր երկու պատանեակներին՝ նկատելով իր քաղցը և անձնուրաց սանի դողդողալը հանեց իր մուշտակն և նրա մէջ փաթաթեց Բահաթրեանին։ Երբ մի փոքր տաքացաւ խաւարի դէմ մարտնչող պատանեակ զինուորը, դարձեալ նրա երևակայութիւնը սկսեց վառուել։ Նա այժմ երևակայում էր, թէ որքան գեղեցիկ կը լինի նոյն Ճանապարհը շրջապատող լեռները, դաշտերը մի քանի ամիս սրանից յետոյ։ Այս հպարտ և գոռոզ սառնամանիքի ու փոթորիկի փոխարէն կը փչէ անուշահոտ զեփիւռն, այս սառցապատ լեռները զարդարուած կը լինեն կանաչ տերևներով և գոյնզգոյն ծաղիկներով։ Այո՛, այդ ժամանակ մեր ուսումնարանների երկպառակութիւնը մարած կը լինի, յաղթութիւնը մեր կողմը կը լինի... Վերջապէս մեր մենամարտողները հասան ս. Էջմիածին։ Մատթէոս կաթողիկոսի ներկայութիւնով Աբէլ եպիսկոպոսը մի քանի վարդապետներով հարցաքննեց Բահաթրեանցին և նրա ընկերին։ Սրանց ամեն մի հարցին սուր և խելացի պատասխանելով, գրաւեցին թէ Վեհափառի և թէ բոլոր միաբանութեան ուշադրութիւնը։ Ցաղթութեան կոնդակով

[1]) Այժմ այդ պարոնը Հ. Նախիջևանուշի է և պարապում է վաճառականութեամբ։

մեր հերոսները վերադարձան Շուշի:

Մի քանի ժամանակից մեր հերոսը վճռեց Թողնել իր ծննդավայրը և գնալ մի այնպիսի քաղաք, ուր կարելի լինի աւելի շատ մտաւոր պաշար ժողովել:

Վերին աստիճանի ազնիւ, հաստատակամ Առաքելը մտքումը դրել էր, ինչպէս էլ որ լինի օրինաւոր ուսում ձեռք բերել և այնուհետև ոչ Թէ խօսքով այլ գործով ցոյց տալ անհուն սէրը իր ազգին և հայրենիքին: Հայրը առանց էն էլ կամենում էր նրան իր արհեստով պարապացնել (վաճառականութիւնով), ուրեմն իր սրտի այդ խորհուրդը յայտնելը և հօրից նպաստ խնդրելը, ոչ Թէ յօնքը կը շինէր, այլ աչքն էլ կը հանէր: Մօրը յայտնէր՝ դարձեալ ոչինչ նպատակ և լաւ հետևանք չպիտի ունենար: Ազգականներ, ընկերներ բոլորը ցընորք կը համարէին նրա դիտաւորութիւնները: Շատ մտածեց գիտութեան սիրահարը, շատ ծանր ու Թեթև արաւ սրան նրան, բոլորից էլ միատեսակ պատասխան ստացաւ:

Վերջապէս մի գիշեր մինչև արշալոյսը բացուելը անկողնի մէջ պարան պարան անելով յանկարծ մի միտք յղացաւ նրա մէջ: «Արի այանի [1]) գրպանի եղած-չեղածը հանեմ, որքան էլ լինի, ինձ Թիֆլիս էլա խօմ կը հասցնի»: Բայց կողոպտել մօրը, փախչել, ահա այն մտածմունքները, որ արգելք եղան նրան իսկոյն իրադործելու այդ միտքը: Շաբաթ-շաբաթի յետևից անցնում էր, իսկ մեր Առաքելը դարձեալ դեռ Շուշումն էր և նրան ստիպում էին խանութ գնալ: Վերջապէս մի գիշեր դարձեալ սաստիկ մտածելուց յետոյ վճռեց մօր գրպանից հանել փողը. «Դէ, Առաքել տղայ, Թէ ուզում ես մարդ դառնաս, մարդի պէտք դաս, քեզանից յետոյ եկողների համար լայն ճանապարհ բանաս, պէտք է անես», ահա այս խօսքերով նա Թռաւ իր անկողնից և մօր գըլխատակից վեր առաւ արխալուխը հանեց նրա ղաւլուխից [2]) եղածչեղածը, դրեց ղաւլուխն իր տեղը և իսկոյն հագնուելով տանից դուրս եկաւ:

Արշալոյսը նոր էր սկսել բացուել, երբ նա արդէն Շուշու պարիսպների տակ տեսաւ Փուրգօններ, որոնցով և եկաւ Թիֆլիզ: Մի քանի ամսում Առաքելը պատրաստուեց և Գիմնազիայի հինգերորդ դասատան հարցաքննութիւնները շատ յաջողութիւնով տուեց: Բայց գժբախտաբար չընդունուեց Գիմնազիայում, որովհետև տեսուչը արգելք եղաւ՝ պատճառ բերելով նրա հասակը:

Ընտանիք և ուսումնարան երկուսն էլ արգելք են լինում նրա նպատակների իրագործման, երկուսն էլ ճնշում են նրան: Բայց Առաքելը յուսահատուողներիցը չէր, կամ ինչ երեսով տուն վերադառնար և ինչի համար:

Մի տարի անցած չանցած մեր Բահաթրեանը Մոսկվայումն է երևում: Ամեն տեսակ զրկանքների և նեղութիւնների դիմադրելով մեր «ես Առաքելը չեմ լինիլ որ չանեմ»ը Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուագիտութեան Լիցէօնումն է փայլում: Խօսքերով

---

[1]) Ղարաբաղցիք մօրը այան են ասում:

[2]) Ղաւլուխ շորից կարած մի տեսակ պօրտման է, որ կանայք նրա մէջ պահում են Թել, ասեղ, փող, կոճակ և այլն: Եւ միշտ գրպաններումն է լինում:

անկարելի է ասել թէ այդ երկաթի ընութեան տէր երիտասարդը ինչպիսի եռանդով էր պարապում։ Հէնց կարծէք այդ երիտասարդը միմիայն աշխատելու համար էր ծնուած։

Ամենաշքեղ կերպով աւարտելով Լիցէօնում՝ արժանանում է կանտիտատի աստիճանի։ Բայց նա դրանով չէ բաւականանում, գնում է Գերմանիա և ընտրելով մանկավարժութիւնը նրան երբեմն մասնագիտութիւն սկսում է լաւ ուսումնասիրել։ Մինչդեռ իր ընկերները կեանքի մէջ մրտած նրա բարիքն են վայելում։ Բահաթրեանը ամենախեղճ, հացի կարօտ, երկու երեք օրը միանգամ ճաշելով ձգտում է դէպի կատարելագործութիւն բայց հէնց էդ ժամանակն էլ նա էլի նոյն քաղցրախօս, զուարթ, ուրախ Առաքելն էր։



Գերմանիայից Բահաթրեանը հրաւիրվում է Սիմֆէրոպոլի ուսուցչական ուսումնարանի տեսուչ և մանկավարժ, իսկ 18$^{81}/_{82}$ թուին Ներսէսեան Դպրանոցի մանկավարժութեան ուսուցչի պաշտօնով հրաւիրուեց Թիֆլիզ։ Բայց մի քանի հանգամանքներից ստիպուած 18$^{82}/_{83}$ թուին նա հրաժարվում է Թիֆ. Ներսէսեան Դպրանոցից և ստանձնում է Նոր-Նախիջևանի հոգևոր Դպրանոցի տեսչութիւնը և մանկավարժութեան ուսուցչի պաշտօնը։

Անցեալ 1883 թուին փետրուարին Ն. Նախիջևանում Բահաթրեանը յանկարծակի հիւանդանում է (ուղեղային բորբոքումով) և բժիշկների խորհրդով տեղափոխում են նրան Խարկով ուր մի քանի օրից (փետրուարի 5-ին 1883 թ.) աւանդում է հոգին։

Առաքել Բահաթրեանը վերին աստիճանի հայրենասէր, հաստատամիտ, եռանդոտ, բարեսիրտ, բայց մի փոքր դիւրագրգիռ էր, որոյ շնորհիւ դժբախտաբար բացատրում են նրա յանկարծակի մահը։ Պրոֆէսոր Կավալևսկին՝ որ այժմ պարապած է Բահաթրեանի ուղեղի հետազօտութիւնով՝ նրա հիւանդութիւնը այն տեսակէտն է համարում, որ շատ հազիւ է պատահում, և մասնագիտական գրականութեան մէջ միայն 8 օրինակ է եղել։ Այդ հիւանդութիւնը առաջ է գալիս, պրոֆէսորի ասելով, շատ աշխատելուց և անդադար մտաւոր ոյժերը լարելուց։ Վաղաթառամ Բահաթրեանի մրտածողութիւնը վերջին օրերումն ևս չէ եղել կորցրած իր խորհին լօգիկան։

Բահաթրեանը յայտնի է և իր մանկավարժական գրուածքներով, (Հոգեբանութիւն, Մէթոդիկայ, Ուղեցոյց և այլն)

Բահաթրեանը վախճանուեց ծաղիկ հասակում մօտ 35 տարեկան, թողնելով ամուսինը և զաւակները անտիրական։

Նա լրան բոլորովին նուիրել էր հայ ազգի բարոյական վերածնութեան, բայց անգութ մահը շատ շուտ խլեց նրան մեզանից։

Հանգիստ ոսկորներդ, մանուկների անկեղծ բարեկամ. դու միշտ կենդանի կը մնաս, քանի որ կը բարձրանի այն մատաղ սրտերը, որոնց մէջ բարի և գեղեցիկ սերմերը ցանելն էր քո վաղաթառամ և արդիւնաւէտ կեանքի միակ նպատակը։

ՄԵՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐՔԵՐ

Ով բարեխղճաբար պարապում է մանուկների հետ, նա գիտէ որ որչափ էլ ինքը լաւ գիտենայ իր առարկան, դարձեալ՝ դասատուն մտնելուց առաջ՝ հարկաւոր է աչքի անցնել դասախօսութեան նիւթը։ Առաւել ևս հարկաւոր է անել այդ, երբ պարապում ես բնագիտութիւնով։

Դիցուք մի դաւառական ուսուցիչ շատ լաւ էլ ըմբռնել է բնագիտութեան դասասաւութեան մեծ նշանակութիւնը մանուկների թէ մտաւոր և թէ բարոյական զարգացման գործում, բայց ինչ անի նա, ինչպէս կատարի՝ իր սրտի փափագը – պարապի մանուկների հետ, քանի որ ինքը համարեա թէ բոլորովին բոբիկ է այդ գիտութեան մէջ (բացառութիւններ ի հարկէ կան)։

Ինձ կ'ասեն. եթէ ուսուցիչն ինքը այդքան տգէտ է, նա չի էլ կարող ըմբռնած լինել բնագիտութեան զարգացման նշանակութիւնը . . .

—Ներեցէք, սխալւում էք. բացատրեմ մի օրինակով։ Ամեն մի ուսուցիչ շատ լաւ հասկանում է, որ ժողովրդական սնապաշտութիւնների գլխաւոր պատճառը բնութեան օրէնքները չհասկանալուցն է առաջ գալիս. ամպի գոռոցը սնապաշտ ժողովուրդը բացատրում է Աստուծոյ բարկութիւնով և գոռոցի միջոցին նա աղաչանքով նայում է երկնքին ու երեսը խաչակնքում. ծիածանի գոյներին նա զանազան մեկնութիւններ է տալիս ու երբեմն ուրախանում, և երբեմն բոլորովին 'ի զուր տեղ յուսահատվում և այլն և այլն։

Ուսուցիչը գիտէ, որ ժողովուրդը սխալվում է ու այդ սնապաշտութիւնով սնդվում են և իր փոքրիկ բարեկամները. գիտէ նոյնպէս որ այդ բոլորը շատ պարզ բացատրելի երևոյթներ են (որովհետև նա գուցէ այդ բանը միմիայն լսել է), բայց ինքը տեղեկութիւն չունի, նա ուզում է ինքը սովորելով՝ սովորացնել և իր աշակերտներին, միայն չգիտէ թէ ինչպէս, ինչ աղբիւրներից օգուտ քաղի։

Գլխաւորապէս այդ ցաւին մի փոքր դարման անելու համար, այստեղ մենք առաջ կը բերենք մի քանի աշխատութիւնների անունները և խորհուրդ կը տանք ուսումնարանների ձեռք բերել.

1) Гас. Тисандье. Научныя развлеченія. 362 մեծադիր երես. 235 նկարներով, 1883 թ. գինն է 2 ռ. 25 կ.

Այս գիրքը ամփոփում է իր մէջ զանազան խորհուրդներ թէ ինչպէս զբաղեցնել մանուկներին ազատ օդում, զանազան ֆիզիքական և քիմիական փորձեր ա-

ռանց գործիքների որոնց մէջ քընվում են շատ և շատ՝ այսպէս անուանուած՝ «Ֆօկուս»-ներ, որոնցով Ճարպիկ խաբեբաները հարստահարում են միամիտ ագէտ ամբոխի առանց այն էլ լղար գրպանները։ Այս աշխատութեան մէջ ընթերցողը կը գտնի նոր և օգտաւէտ գիւտերի մեկնութիւններ և այլն և այլն։

2) **Доступные опыты** I. Воздухъ и его свойства. С. Григорьева. 74 *երես* 42 *նկարներով*, 1881 *թ. գինն է* 40 *կ.*

3) **Доступные опыты** II. Вода и ея свойства. С. Григорьева. 154 *երես* 63 *նկարներով*, 1882 *թ. գինն է* 70 *կ.*

Այս երկու գրքոյկները պարունակում են իրանց մէջ անթիւ փորձեր համարեա թէ առանց գոծիքների։ Փորձերն այնչափ գեղեցիկ են դասաւորուած և այնչափ հասկանալի են. որ 10—12 *տարեկան երեխանները մեծ բաւականութիւնով ու հետաքրքրութիւնով կը պարապեն ֆիզիքայի այդ երկու գլխաւոր մասերով։ Մեր կարծիքով դրանք շատ յարմար են մեր ծխական դպրոցներին։*

Գաւառական ուսուցիչներին, որոնք չեն անցել ֆիզիքայի սիստեմատիքական կուրսը, առաջարկում ենք.

4) Начальныя основанія физики. Руководство для городскихъ училищъ и учительскихъ семинарій. А. Малинина. 192 *մեծադիր երես* 272 *նկարներով*, 1879 *թ. գինն է* 1 *ռ.* 10 *կ.*

5) **Поль Бэръ.** Первыя понятія о зоологіи. Перев. Мечникова 307 *եր.* 345 *նկարներով* 1883 *թ. գինն է* 1 *ռ.* 10 *կ.*

6) *Նոյնը, թարգմանութիւն Ն. Վագների.* 348 *եր.* 523 *նկարներով*, 1883 *թ. գինն է* 1*ռ.* 25*կ.*

7) Элементарный курсъ зоологіи съ прилож. задачъ и лѣтн. занятій по зоологіи. К. Сентъ-Илеръ. 224 *մեծադիր երես* 200 *նկարներով։* 1881 *թ. գինն է* 1 *ռ.* 35 *կ։*

8) **Поль Бэръ.** Лекціи зоологіи. Анатомія и физіологія. 458 *մեծադիր երես* 402 *նկարներով*, 1882 *թ. գինն է* 2 *ռ.* 80. *կ.*

9) Краткое наставленіе къ приготовленію животныхъ для коллекцій или изложеніе способовъ набивки чучелъ, препарированія скелетовъ и собиранія насѣкомыхъ. Г. Марозовъ. 34 *եր. պատկերներով*, 1881 *թ. գինն է* 30 *կ.*

Այս անգամ բաւականանանք այսքանով։ Աւելորդ համարեցինք յիշել ԲՐԷՄԻ հռչակուած աշխատութիւնների մասին, որոնք ամենաանհրաժեշտ զարդ պէտք է լինին ամեն մի ուսումնարանի ուսուցչական գրադարանի համար. երկու հաստ հատոր. Կաթնակերանասունները և Թռչունները Շետլէրի փոխադրութիւնով և բազմաթիւ գեղեցիկ նկարներով. արժէ ընդամենը 9 *ռ.* 50. *կ.*

Վերոյիշեալ գրքերը կարելի է ձեռք բերել Թիֆլիզի «Կենդրոնական» և «Կովկասեան» գրավաճառանոցներից։

ՄԱՆԿԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Երբ մէկը ուզում է ձեռք բերել մի ընթերցանութեան գիրք իր որդու համար և մտնում է մի գրավաճառանոց, գրավաճառը նրա առաջ այնքան մեծ ու փոքր, բարակ ու հաստ, շքեղ ու ագեղ

գրքեր ու գրքոյկներ է դարսուում, որ նա չի լմանում՝ նրանցից որ մէկին առնի. այդպիսիներն ըստ մեծի մասին վերցնում են առաջին պատահածը և մի տեսակ բաւականութիւնով տանում տալիս իրանց զաւակներին. խեղճերը չեն երևակայում անգամ թէ՝ յաճախ ինչ թոյն են մօտեցնում անմեղ երեխաների շրթունքներին, հետևաբար և նրանց սրտին... Առաւել վատ է այն գաւառացիների դրութիւնը, որոնք ստիպուած են միւս քաղաքներից բերել տալ ընթերցանութեան գրքերը... Կամենալով օգնել թէ մասնաւոր անձանց և թէ մեր ուսումնարաններին ընթերցանութեան գրքերի ընտրութեան մէջ, «Աղբիւրը» այսուհետև կը տայ մաս-մաս ցուցակ այն գրքերի, որոնք մեր կարծիքով իրաւ կարող են օգտաւէտ լինել։

Ամեն մի գրքի անուան վերջը փակագծերի մէջ դրած են թուանշանները, որոնք ցոյց են տալիս մօտաւորապէս հատորը, որի համար մեր կարծիքով նշանակուած է այն գիրքը։

1) Աղայեանց Ղ.։ Անահիտ (Հայոց բանաւոր զրոյցներից առած)։ 75 եր. 1881 թ. գինն է 50 կ.։ Այս ընթերցանութեան դեղեցիկ գրքոյկի բովանդակութիւնը արդէն յայտնի է մեր ընթերցողներին (10—16)։

2) Աղայեանց Ղ.։ Սրինգ հովուական։ Մանկական ոտանաւորներ երգեր և առակներ։ 32 եր. 1882 թ. գինն է 20 կ.։ Փոքրիկ մանուկներին դիւրամատչելի և հետաքրքիր հատուածներ (7—12)։

3) Աբարատեանց Աղ.։ Փնտրիկ մանկական։ 113 եր. 1880 թ. գինն է 40 կ.։ Դիւրաւորապէս դիւղական կեանքից վերցրած պատկերներ։ Մի-միայն ցաւալի է, որ հեղինակը երբեմն մանուկներին անմատչելի դատողութիւններ է անում, ինչպէս «Մանկական օրօրոցը մարդկութեան անհեցողութեան սկզբնաւորութիւնն է» . . .։ Խոշոր տառերով տպածը մանուկներին մատչելի ու օգտակար նիւթ է կազմում և մեր ազգաբանի մանկական գրականութեան մէջ ամենայն աջնակարգ տեղ կարող է բռնել։ Լեզուն կոկ է և հարուստ ժողովրդական բառերով։ Այստեղ տուած է 118 հետաքրքիր հանելուկներ (7—11)։

4) Աւետարանում։ Թաւամալ մեղու։ Թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանց։ 2 դեղեցիկ պատկերներով և կազմած 29 մեծագիր եր. 1879 թ. գինն է 40 կ. Աղուշների կեանքի նկարագրութեան մէջ արծարծուած է «Ամենքը մէկի համար, մէկն ամենքի համար» դաղափարը (7—12)։

5) Աղանեանց քահ. (Թարգ.)։ Զէստերոնի ժառանգը 4 անպէտք պատկերով։ 288 եր. գինն է 1 ռուբլի։ Մի դեղեցիկ վէպ, ուր ցոյց է տուած գործունէութեան պղտաբերը հետևանքները։ Խորհուրդ ենք տալիս մեր մանաւանդ հարուստ ազանների տալ իրանց մոլորուած զաւակներին այդ գիրքը։ (12—16)։

6) Անդէրսէն։ Սխալ. (Հրատ Տ. Նազարեանց) 27 եր. 1882 թ.։ Մի դեղեցիկ առասպել Զենացիների կեանքից։ Սա այնտեղի առասպելներից մէկն է, որը ամեն մի հասակի ընթերցող բաւականութիւն է զտնում և իր տեսակետովն է հասկանում։ Միայն ցաւում ենք, որ սրան կից տպած է նոյն հեղինակի և մի այլ փոքրիկ առակը, «Խոզարած» որը երեխաներին չի կարելի տալ, և որը հեշտութիւնով կարելի է և պէտք է առանձնացնել առաջինից։ (7—16). գինն է երկուսինը միասին կազմած — 20 կ.

7) Աղանեանց քահ.։ (Թարգ. Ալամէտվից) Բօբինզօնի պատմութիւնը. — եր. 60 կ. 1881 թ.։ Աւելորդ ենք համարում անդամ խօսել այդ գրքի վերին աստիճանի հետաքրքիր զարգացուցիչ յայտնի բովանդակութեան մասին (7—16)։

8) Բիչէր—Ստօու։ Թոմաս եղբօր

տեսակը. փոխադր. երեխ. համար ։. Պալմէր, Թարգ. օր. Ն. Տ.—Մարկ. 4 գեղեցիկ պատկերներով 80 մեծադ. եր. 1880 Թ. գինն է կազմած 60 կ., անկազմ 40 կ.։ Նկարագրուած է ամբիկակեան տարուկինների դասն վիճակը։ Այդ տեսակ վիճակի մէջ եղած մարդկանց դրութեան հետ անշուշտ պէտք է ծանօթացնել նոր սերունդը (10—16)։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք հետեւեալ գրքերը.

Պ. Ա. Աղբեանեանից Շերմանդադէի «Գործատարի յիշատակարանից» (մի պատկեր վաճառականական կեանքից) և «Հրդեհ Նաւթագործարանում» (Բաքուի մշակների կեանքից). գինն է 50 կ. Պ. Սարգիս Մարգսեանից «Աղուեցոց բարբառը (գիւղերի լեզուն) գինը 2 ռ.։ Պ. Բաթիլի Զալէդդին. գինն է 75 կ.

Պ. Յ. Պարոնբէկեանից նօտեր (պոլկա) դաշնամուրի համար, գինը 50 կ.։ Եղնէսա Բրնան. Խալամանութիւնը և դեռութիւնը, տպուած է պ. Յ. Մարտիրոսեանցի տպարանում. շատ գեղեցիկ թղթի վրայ ու մաքուր տպագրուած։

—

Այս տեսաւ «Աղբիւրի» հրատարակութեամբ առանձին գրքոյկով «Փայտաշէն խրճթից մինչև սպիտակ տունը», որ անցեալ տարի տպագրուեց «Աղբիւրի» №№ 4—12ում։ Գինն է 60 կ.

—

«Աղբիւրի» անցեալ տարուայ տպուած համարները (№№ 1, 2 և 3) մի քանի օրինակ ձեռք բերինք և ուրախութիւնով դարձեալ կը գնենք այդ համարները, հատը 50 կոպէկով։ Այժմ կարող ենք յանկացողներին ուղարկել և ամբողջ 1883 Թ. համարները, միայն չէ Թէ 3, այլ 4 ռուբլով, կէս տարուայ գինը՝ № 4-ից սկսած, 2 ռ. արժէ։

—

Խոնարհաբար խնդրում ենք «Աղբիւրի» նոր բաժանորդներին պարզ և մաքուր գրել հասցէները, հակառակ դէպքում խմբագրութիւնս պատասխանատու չէ, եթէ համարները կանոնաւոր չստանան։

—

«Աղբիւրի» յառաջ փորագրիչ պ. Տատիա-Շվիլին ընդունում է զանազան պատուէրներ փորագրելու։

—

«Վարժարան» Մանկավարժական ամսագրի խմբագրութիւնը խնդրում է մեզ յայտարարել, որ ներկայ ամսուանից կը սկսուի Թերթի հրատարակութեան շարունակութիւնը նոյն դիրքով և նոյն աշխատակիցների մասնակցութիւնով։ Զոյս տեսած չորս ամսուայ համարների փոխարէն «Վարժարանի» խմբագրութիւնը խոստանում է յունիսին տալ մի ընթերցանութեան գիրք կամ նոյն ապիսների համարների չափ մի համար։ «Վարժարանի» տարեկան գինը 5 ռ. է։ Յանկանում ենք, որ «Վարժարանի» յարգելի խմբագրութիւնը այս անգամ հատարեալ յաջողութիւն ունենայ երկար տարիներ շարունակելու իր ստանձնած գործը։

—

Անցեալ տարի «Աղբիւր» ուղարկում էր հարիւր թերթ քաղաքներ, գիւղերներ և գիւղեր. դրանցից երեսուն և վեց տեղից ստացանք երկու հարիւրից աւելի նամակներ և հեռագիրներ, որոնք իրանց համակրութիւն են յայտնում «Աղբիւրին», շնորհաւորում են նրա երկրորդ տարեշրջանը և այլն և այլն։ Անկարող լինելով բոլորին միառմի պատասխանել՝ յայտնում ենք ամենքին մեր խորին շնորհակալութիւնը։

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Յայտնուել են մարդիկ, որոնք ըսկըսել են փնտռել «Աղբիւրի» մէջ վնասակար, անբարոյականացնող ուղղութիւն։ Դրանք, ի հարկէ, չեն յանդըգնում բացարձակ այդ ասել, բայց երբեմն զանազան մութ ակնարկներ են անում։

Անցեալ տարի Բաֆֆու «Զրաբերդ»-ի վրայ յայտնել էին այն կարծիքը, որ այդ պատկերը անբարոյականացնող է. այս տարի ձգտեցին յարձակուել «Աղբիւրի» գլխաւոր աշխատակից Ն. Նեսմելովի (այո՛, գլխաւոր աշխատակից է) վրայ, որ իբր իր «անհամ, անկապ «Ուրախութիւն և վիշտ» պատկերով հանդէս է դուրս եկել . . .» որքան անհամ և անկապ է, այդ դեռ հարց է, որի մասին մեր կողմից աւելորդ ենք համարում անգամ խօսել, բայց չենք կարող լռութեան տալ մի լրբութիւն, որ արած է մեր յարգելի աշխատակցի պատկերի վերաբերմամբ։ Ինչպէս յիշում է «Աղբիւրի» ընթերցողը, այդ պատկերի մէջ դուրս է բերուած 'ի միջի այլոց մի ցնցոտիներով ծածկուած աղքատ աղջիկ, որնոր մուրացականութիւն է անում. սա վերադառնալիս ճանապարհին կանգնում է մի շքեղ տան առաջ, ուր պարահանդէս է լինում այդ գիշեր և բարձրանալով հանդէպի տան սանդուխքի վրայ, որտեղից մասամբ երևում են զարդարուած կանայք և երեխաներ, խեղճի քունը տանում է։ Այս աղքատ Նունէն երազ է տեսնում. պատկերանում է նրա առաջ հայրենի տարը և այլն և այլն երազի ընթացքը, և որովհետև երազը արդիւնք է յայտնի զգացած տպաւորութիւնների՝ անշուշտ մի քանի անգամ ընդհատվում է և միշտ մի բանից անցնում է միւսի վրայ. դա յայտնի է ոչ թէ ամեն մի հասկացող մարդու, այլ ամեն մի երեխային... Ի՞նչ կայ զարմանալու, որ Նուն'ի երազը ևս ենթարկվում է այդ տեսակ ընդհատումներին . . և հայրենի սարերից, զետից, մօրից յետոյ նրան յանկարծ պատկերանում է նոյն իսկ քաղաքը իր հեղձուցիչ օդով և այլն և այլն, որ իրանից հին պատառոտած ցնցոտիքը մի անտեսանելի ձեռք վերցրել և տեղը նորն է տուել . . . որ նրա բոբիկ ոտները ծածկուած են սպիտակ սռնապաններով և այլն և այլն։

Այս բոլորը ի հարկէ շատ բնական է, բայց կեղտոտ աչքերին ներկայացել է, որ Նունէն զարթել է (լիրբ զրպարտութիւն) և նրան՝ Նունէին իբր թէ այդ բոլորը իրաւ պատահել է . . . Ուրեմն նա՝ պարզ ասէք էլի— անբարոյականացել է . . . . Հապա եթէ այդ չէիք ուզում ասել, ի՞նչու էք անտեսանելի ձեռք խօսքերից յետոյ փակագծերի մէջ հարցական նշան դնում... Բաֆֆին անբարոյական մտքեր է քարոզում «Աղբիւրում», Նեսմելովը նոյնպէս . . . յետոյ . . . ։

Շարունակեցէք, մենք մեր գործը ճանաչում ենք մեր հասկացածի չափով և ձեր վարմունքը «Աղբիւրի վերաբերմամբ մեզ համար շատ հեշտ բացատրելի է . . .

«ԱՂԲԻՒՐԻ» ՆՈՒԻՐՈՂՆԵՐ

Ներկայ տարուայ «Աղբիւրի» մի-մի օրինակ նուիրել են՝

Բժ. Արամեանց Շամախու հայ գրադարանին։

Պ. Մարկոս Դօլուխանեանց Մոսկուայի Պետրովսկի Ակադեմիայի հայ ուսանողներին։

Պ. Իսահակ Թաթէոսեանց Պտրա (Ղարաբաղում) գիւղի հայ ուսումնարանին։

Պ. Գերասիմ Եակուլեանց Բէկլարքենդի հայ ուսումնարանին։

Պ. Գրիգոր Տէր-Յակոբեանց Զագամի հայ ուսումնարանին։

Պ. Աստուածատուր Գօլուխանեանց Կետաշէնի հայ ուսումնարանին։

Պ. Յ. Տիգրանեանց Ալէքսանդրապօլի Մարիամեան օրիորդական ուսումնարանին։

Տիկին Աղբիէննա Կոստանեանց Ալէքսանդրապօլի Սահականուշեան օրիորդական ուսումնարանին

Պ. Նիկողայոս Դրամբեանց Ալէքսանդրապօլի Սրբութեան օրիորդական ուսումնարանին։

Պ. Մկրտիչ Սանասարեանց՝ 1 օր. Ս. Պետերբուրգի հայ ուսանողութեան, 1 օր. Հաւլաբարի Մարիամեան օր. ուսումնարանին, 1 օր. Վանի Սանդըխտեան օրիորդական ուսումնարանին, 1 օր. Խարակոնիսի (Վանայ նահանգում) ուսումնարանին և 1 օր. Կարնոյ Սանասարեան ուսումնարանին։

Ստեփան քահանայ Դէմիրջողլեանց Ախալքալաքի հայոց ուսումնարանի կից գրադարանին։

Օր. Նատալիա Տէր-Յարութիւնեանց Թիֆ. Նորաշէնի հայ օրիորդական ուսումնարանին։

Օր. Սրբուհի Ումիկեանց Խարկովի համալսարանի հայ ուսանողութեան։

Պ. Զոհրաբեանց Կիևի համալսարանի հայ ուսանողութեան։

Պ. Նիկողայոս Գարսոյեանց Կազանի համալսարանի հայ ուսանողութեան։

Պ. Նիկողայոս Մեղվինեան Դիլիջանի Լուսաւորչեան ուսումնարանին։

Պ. Մովսէս Թաւադեան Շուշու օրիորդական ուսումնարանին։

Պ. Գաբրիէլ Տէրտէրեանց Արմաւիրի հայ երկսեռ ուսումնարանին։

Պ. Գրիգոր Բայիսողոլեանց Զրկինենց եկեղեցւոյ ծաղկոցին։

Պ. Սարգիս Ղազարեանց Հաւլաբարի Մարիամեան օրիորդաց ուսումնարանին։

Պ. Գրիգոր Մատինեանց Հաւլաբարի Շամքուեցոց ուսումնարանին։

Պ. Սիմէօն Շահվերդեան Գորու ուսուցչական Դպրանոցին։

Պ. Աղէքսանդր Մելիք-Հայկազեանց՝ 1 օր. Քութայիսի Օր. ուսումնարանին, 1 օր. Զխարու հայ ուսումնարանին, 1 օր. Սօլխերի հայ ուսումնարանին և 1 օր. Գոմու Մելիք-Հայկազեան ուսումնարանին։

Պ. Վահրամ Մութաֆեանց Ախալցխայի օրիորդական ուսումնարանին։

Պ. Գրիգոր Միրզոյեանց՝ 1 օր. Դուշէթի ազգ. հոգ. ուսումնարանին. 1 օր. Փարիզի հայ ուսանողութեան և 1 օր. Թիֆլիզի Մետէխի Բերդի բանդարկեալներին։

Պ. Խաչատուր Ղլտչեան Ախալցխայի Ազգ. հոգևոր ուսումնարանին։

Պ. Սարգիս Ղազեանց Շորշէնի Կենդրոնական ուսումնարանին։

Պ. Մ. Վասակեանց Գանձակու օրիորդական ուսումնարանին։

Օր. Նունէ Սալամբէկեանց Քարվանսարայ գիւղի Վարդանանց ուսումնարանին։

(Կը շարունակուի)

„ԱՂԲԻՐԻ“ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԱԳՈՒԼԻՍ. Պ. Ք. Թէև ձեր տիտղոսը ընդհանրապէս շատ հրապուրիչ է, բայց... բայց «Աղբիւրը» սովորութիւն չունի անուններով և և տիտղոսներով հրապուրուելու։ Թափեցէք խոստացած «անձրևները», շնորհակալ կը լինինք, եթէ դուք համոզուած էք, որ նա ձեր ասածի պէս «չի պղտորիլ «Աղբիւրը»։ Ուղարկածներիցդ մասամբ օգուտ կը քաղենք։ Յիշուած թարգմանութիւնները ուղարկեցէք. կը տեսնենք։

ԱԽԱԼՑԽԱՅ. Մ. Ա. «Աղբիւրը» շատ

ուրախ է լինում, երբ իրան աշխատակցում են մինչև անգամ բոլորովին անյայտ մարդիկ, ուրեմն թոյլ տուեցէք մեզ չշեղուիլ մեր գլխաւոր պայմաններէն մէկից, որ հազար անգամ տպել ենք. այն է՝ անպայման ուղարկուած նիւթերը խմբագրութեանս սեպհականութիւնն են համարվում, ուրեմն կարող ենք և փոփոխել, եթէ հարկաւոր կը դատենք: Իսկ եթէ դուք ցանկանում էք, որ այս կամ այն ինչ նիւթը տպագրուի առանց փոփոխութիւնների, այդ տեսակներից իւրաքանչիւրի տակ պէտք է յիշէք ձեր պայմանը:

ԳԱՆՁԱԿ. Մեր ութ տարեկան ապագայ աշխատակից Խոսրով Խոսրովեանցին. նամակդ ստացանք: Հանելուկդ լաւ է, բայց «Ազբիւրի» համար մի փոքր անյարմար է. աշխատիր գիտցածդ խաղերը նկարագրել ու մեզ ուղարկել:

Գանձակ. Գր. Ք. Բ. } Ո՛չ. չէինք կարծում. բայց համաձայնեցէք բացառութիւններ էլ չենք կարող անել, քանի որ ասել էինք, որ ոչ ոքի չենք ուղարկելու. ուղարկում ենք միայն նրանց որոնք նորոգել են իրանց բաժանորդագրութիւնը:
Նուխի. Գ. Ղ. }

Թիֆլիզ. Օր. Վ. Ս. Շատ շնորհակալ կը լինէինք եթէ շարունակէիք: Ձեր ոճը շատ գեղեցիկ է, դարձուածները լաւ: Ձեր ընտրած նիւթը նոյնպէս գեղեցիկ է և նպատակայարմար, միայն ցաւում ենք, որ հակառակ մեր կամքին՝ ստիպուած ենք առայժմ չտպագրել: Բարեհաճեցէք մտնել խմբագրութիւն:

Պօլիս. Բուր. Ման. Խմբ. Շնորհակալ ենք, ստացանք: Ձեզ փօստայով նամակ գրեցինք:

Ադրիանապօլիս. Հ. Ղ. Փ. Բարեհաճեցէք հաղորդել. այսուհետև Պօլսի վրայով պէտք է ուղարկենք: Նախորդ համարները ստացել էք թէ չէ:

Ագուլիս. Ա. Տ. Դրանց առանձին է եղել ուղարկուած: Շարունակեցէք գրել, տպուելուն մի՛ սպասէք: Ձեզ փօստայով նամակ գրեցինք:

Աստրախան Յ. Ծ. Սխալմամբ է ուղարկուած, հաճեցէք յետ ուղարկել:

Շուշի. Տ. Մ. Բ. Գ. Շնորհակալ ենք Ձեր համակրութեան համար: Քաջայոյս ենք, որ չէք սպասիլ միւսի տպագրութեան. այլ կ՚ուղարկէք Ձեր աշխատութիւնները, հաւաստի լինելով որ նպատակայարմարները չեն մնալ առանց տպուելու:

Էջմիածին. Ն. Ա. Եթէ Ձեր խորին համոզմունքն է... լաւ էք անում մենք էլ ենք շատ համակրում: Շարունակեցէք համակրել, միայն նայեցէք չհիասթափուէք:

Ս. Ղ. Կրկին ուղարկեցինք: Շատ շնորհակալ ենք: Այո՛, Ձեր ենթադրութիւնը ճիշդ էր:

Մոզդոկ. Օր. Կ. Ա. Թէև յարմար է, բայց տպագրել այս տարի անկարող ենք, որովհետև երկար է: Բարեհաճեցէք կարճ, քիչ տեղ բռնող, բայց շատ իմաստ բովանդակող յօդուածներ ուղարկել մեր ուղղութեան համապատասխան, որ շնորհակալութիւնով կը տպագրենք:

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ:

Дозволено цензурою. Тифлисъ, 1 марта 1884 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 5.

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՀԵՏԵՒԵԱԼ ԹԵՐԹԵՐԻ ՆԵՐԿԱՅ 1884 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

Գրականական քաղաքական լրագիր տարեկան գինը 10 ր. կէս տարուանը 6 ր. խմբ.-հրատ. Գ. Աբծրուանի. հասցէն՝ Тифлисъ, Редакція „Мшакъ“

ԱՐԶԱԳԱՆՔ

Քաղաքական գրականական շաբաթաթերթ. տարեկան գինը 5 ր. համարները 10 կոպ. հասցէն՝ Тифлисъ, Ред. „Ардзаганкъ“ Խմբ.-հրատ Ս. Յովհաննիսեան

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Գրականական լրագիր. տարեկան գինը 10 ր. կէս տարին 6ր. Խմբ. Գ. Սիմէոնեանց. հասցէն՝ Тифлисъ. Редакція „Мегу Айастани“

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹ

Մխիթարեան հրատարակութիւն. տարեկան գինը 3 ր. Խմբ. հրատ. Լ. Տիզբանեանց. հասցէն՝ Эривань. Ред. жур. „Гигіеническій Листокъ“

ՆՈՐ-ԴԱՐ

Քաղաքական գրական ամիսօրեայ թերթ. Տարեկան գինը 10 ր. կէս տարուանը 6 ր. հասցէն՝
Тиф. Редакція „НОРЪ—ДАРЪ“
Խմբ. հրատ. Ս. Սպանդարեան.

ԵՐԵՒԱՆՅԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակվում է շաբաթը երեք անգամ. տարեկան գինը 1 ր. խմբ.-հրատ. Էմ. Տէր-Գրիգորեանց. հասցէն՝ Эрив. Типографія Теръ-Григорянцъ.

„ОГОНЁКЪ“

Иллюстр. еженедѣл. Журналъ. литературы, наукъ и искусствъ съ преміями. Год. цѣна съ пересылк. 6 руб.
Ред. Н. П. Аловертъ, Изд. Г. Д. Гоппе.
Адресъ: С.-П. Больш., Сад, д. № 16.

„НЕДѢЛЯ“

Еженедѣл. газета (приложеніе жур. Роман. и Повѣстей). Год. плата 8 руб.
Ред.-Изд. П А. Гайдебуровъ.
Адресъ: С.-П., (уг. Иванов. и Кабинетск., д. № 6/12

„НЕВА“

Иллюстриров. газета еженедѣльная съ прилож. год. плата 6 р.Ред. П М. Дмитріевъ, Изд. А. О. Бауманъ.
Адресъ: С.-П., Исакіеск. пл. д. № 6

„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ“

Еженедѣл. журналъ 1-2 печат. лист. Годовая цѣн. съ пересылк. 10 руб.
Ред. Изд. А. С. Френкель.
Адресъ: Тифлисъ Ред. журн. „Юридическое Обозрѣніе“.

„КАВКАЗЪ“

Ежеднев., политическ. и литератур. газета Годов. цѣн. съ пересылк. 12 руб.
Ред.-Изд. кн. Д. Г. Эристовъ.
Адресъ: Тифлисъ, Ред. газеты „Кавказъ“.

ՆԵՐԿԱՅ 1884 ԹՎԻՆ

„ԱՂԲԻՒՐ“

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՄԻՍԻԻՈՅՆ ԴԻՐՔՈՎ, ՈՒՂՂՈՒԹԻՒՆՈՎ ԵՒ ՀԵՏԵՒԵԱԼ ԱՆՁԻՆՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹԻՒՆՈՎ.

Աղայեանց Ղ., Աբելեանց Ն., Ալավերդեան Ա., Դաստակեանց Ա., Եաղուբեան Գ., Զոհրաբեան Բ., Թամաբ., Խաչամիրեանց Գ., Մելիք—Շահնազարեանց Կ., Մելիք—Ադամեան Լ., Մեհրաբեան Ա. (Սբինգ), Միրզոյեան Գ., Միհրուհի (օր.), Միքայէլեան Բ., Յովհաննիսեան Գայիանէ, (օր.), Յովհաննիսեան Նատալիա, (օր.), Շահվերդեան Գ., Շիրվանզադէ, Սալավիէվ—Նեսմէլով Ն., Վաչագան, Տէրեանց Ա., Բաֆֆի, Փամփուխչեան Մ., Քամալեան Ս. և ուրիշներ։

Խմբագրութեանս մէջ մնացել են անցեալ տարուայ № 4—12 գինն է 2 ռուբլի։

«Աղբիւրի» տարեջին պրեմիան կը լինի «Պարոյր Հայկազն և Մովսէս Խորենացին» պատկերը, (տես Աղբիւր № 2 երես 77), որ նկարում է յայտնի Հայկազն նկարիչ՝ Բաշինջաղեանը և կը պատրաստուի Վիէննայում։

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Агбюръ“ իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction du journal. «AGBUR.»

«Աղբիւրին» Թիֆլիսում կարելի է ստորագրուել և հայ գրավաճառանոցներում, պ. Շահվերդեանի պավիլիոնում ու Մանկական գրադարանում, իսկ Պոլսում «Բուրաստան Մանկանց» հանդիսի խմբագրատանը։ Խմբագիր Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ։

ԲՈՒՐԱՍ· ՄԱՆԿԱՆՑ

Պատկերազարդ հրատարակութիւն ամբողջ երկու անգամ, տարեկան գինը 4 ր. Հրատարակվում է Պոլսում, ստորագրուել կարելի է «Վարժարան» ամսագրի խմբագրատանը։

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ»

Ամսագիրը կը հրատարակուի 1884 թուականից գլխաւորապէս մանկավարժական ուղղութիւնով, ամսական տարը երկու-երկու թերթից, տարին 10 տարբ։ Տարեկան գինը երեք մանէթ։

Հասցէն՝ Эчміадзинъ, Редакція „Манкаваржаноцъ“. Խմբ.-հրատ. Խորէն Ծայր. վար. Սահակեանէ։